

ՏԵՂԵԿԱՆՔ

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ
ՄԱՍԻՆ**

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան և նպատակը

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության համակարգի ~~իրավական, կազմակերպական և ֆինանսական հարցերի~~ ~~հետ~~ ~~կապված~~ ~~հարաբերությունները:~~ ***գործունեության իրավահարաբերությունները, ոլորտի կառավարման և ֆինանսատնտեսական հարաբերությունները:***

2. Սույն օրենքը սահմանում է բարձրագույն կրթության համակարգի նպատակներն ու խնդիրները, ոլորտի պետական քաղաքականության սկզբունքներն ու սոցիալական երաշխիքները, անձի նախասիրություններին, հնարավորություններին, գիտության ու աշխատաշուկայի կարիքներին և զարգացման միտումներին համապատասխան բարձրագույն կրթություն ստանալու իրավունքի իրացման, բարձրագույն կրթական ծրագրերի և դրանք իրականացնող կազմակերպությունների գործունեության հիմքերը, արդյունքների ճանաչման և համագործակցության մեխանիզմները:

2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների վրա՝ անկախ նրանց կազմակերպատիրավական ձևից, եթե առանձին բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների համար միջազգային պայմանագրերով կամ օրենքով դրանց կարգավիճակը, կառավարման ու գործունեության առանձնահատկությունները սահմանող այլ բան նախատեսված չէ:

3. Հայաստանի Հանրապետության ռազմական և ոստիկանական բարձրագույն ուսումնական հաստատությունների կարգավիճակը, կառավարման ու գործունեության առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով, եթե այլ օրենքներով կամ իրավական ակտերով այլ բան նախատեսված չէ:

Արվեստի, սպորտի և բժշկության ոլորտների որակավորումների համար կարող են սույն օրենքով կամ տվյալ ոլորտը կարգավորող այլ օրենքներով սահմանվել կարգավորման այլ հիմքեր և մեխանիզմներ:

**Հոդված 2. Բարձրագույն կրթության և գիտության մասին Հայաստանի
Հանրապետության օրենսդրությունը**

1. Բարձրագույն կրթության և գիտության համակարգում հարաբերությունները կարգավորվում են Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, «Կրթության մասին», «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն օրենքով, **ուլորտը կարգավորվող այլ օրենքներով** և իրավական ակտերով:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքի իմաստով օգտագործվող հիմնական հասկացություններն են.

1) ակադեմիական բարեվարքություն՝ ուսումնառության և գիտակրթական գործունեության իրականացում մասնագիտական էթիկայի՝ մասնագիտական վարվելակերպի սկզբունքներին և բարոյական վարքագծի կանոններին համապատասխան,

2) բարձրագույն կրթություն՝ բակալավրի, մագիստրոսի կամ դոկտորի որակավորումներ շնորհող մակարդակներում իրականացվող ուսումնառության գործընթաց,

~~3) բարձրագույն ուսումնական հաստատություն (այսուհետ՝ բուհ)՝ իրավաբանական անձի կամ օրենքով սահմանված պետական հիմնարկի կարգավիճակ ունեցող կազմակերպություն որն ունի պետության կողմից սահմանված կարգով բարձրագույն կրթական ծրագրերով ուսումնառություն կազմակերպելու իրավասություն և իրականացնում է մեթոդական, գիտահետազոտական, գիտատեխնիկական կամ նորարարական գործունեություն,~~

3) բարձրագույն ուսումնական հաստատություն (այսուհետ՝ բուհ)՝ իրավաբանական անձի **կարգավիճակ ունեցող կազմակերպություն** կամ **դրա ստորաբաժանում, որը օրենքով սահմանված հիմքերով իրականացնում է բարձրագույն կրթության համապատասխան մակարդակի կրթական ծրագիր, կազմակերպում** մեթոդական, գիտահետազոտական, գիտատեխնիկական կամ նորարարական գործունեություն,

4) հանրային (պետական) բուհ՝ պետության կողմից **միանձնյա կամ միջպետական պայմանագրի հիմքով համատեղ հիմնադրված ոչ առևտրային կազմակերպություն**. ~~Թրաքս բուհ հիմնադրված և իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն,~~

5) պետության մասնակցությամբ բուհ՝ պետություն մասնավոր գործընկերության շրջանակներում ~~որաքս բուհ հիմնադրված ոչ առևտրային կազմակերպություն,~~

պետության հետ համատեղ ոչ պետական կազմակերպության կամ ֆիզիկական անձնաց, այդ թվում՝ օտարերկյա, հիմնադրված ոչ առևտրային կազմակերպություն,

6) մասնավոր բուհ՝ *իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից (այդ թվում՝ օտարերկրյա)*, առանց պետության մասնակցության որպես բուհ հիմնադրված կազմակերպություն,

7) գիտական կազմակերպություն՝ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն, որն *օրենսդրությամբ սահմանված հիմքերով իրականացնում է* ~~բուհի~~ պետության կողմից սահմանված կարգով գիտահետազոտական, գիտատեխնիկական և նորարարական գործունեություն իրականացնելու իրավասություն,

8) հանրային (պետական) գիտական կազմակերպություն՝ պետության կողմից *միանձնյա կամ միջպետական պայմանագրի հիմքով համատեղ հիմնադրված* և իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն,

9) պետության մասնակցությամբ գիտական կազմակերպություն՝ ~~պետություն~~ մասնավոր գործընկերության շրջանակներում հիմնադրված գիտական պետության հետ համատեղ ոչ պետական կազմակերպության կամ ֆիզիկական անձնաց, այդ թվում՝ օտարերկյա, հիմնադրված ոչ առևտրային կազմակերպություն,

10) մասնավոր գիտական կազմակերպություն՝ առանց պետության մասնակցության (այդ թվում՝ օտարերկյա) հիմնադրված կազմակերպություն,

11) ուսանող (*կուրսանտ, սովորող*)՝ բարձրագույն կրթության ցանկացած մակարդակի կրթական ծրագրով ուսումնառող անձ,

12) կլինիկական ռեզիդենտ (կլինիկական օրդինատոր)՝ բարձրագույն բժշկական կրթության հենքի վրա ինքնուրույն մասնագիտական գործունեության իրավունք ունեցող բժշկի հսկողությամբ ոչ ինքնուրույն մասնագիտական գործունեություն իրականացնող և ուսումնառող անձ,

13) բարձրագույն կրթության որակավորում (այսուհետ՝ որակավորում)՝ *անձին շնորհվող* կրթական կամ գիտական աստիճան, որը հավաստում է բարձրագույն կրթության տվյալ մակարդակի կրթական ծրագրի ուսումնառության ավարտը և հաստատվում է համապատասխան ավարտական փաստաթղթով,

14) բակալավրի որակավորում՝ *անձին շնորհվող* կրթական աստիճան, որը հավաստում է բարձրագույն կրթության առաջին մակարդակի կրթական ծրագրի ուսումնառության ավարտը,

15) մագիստրոսի որակավորում՝ *անձին շնորհվող* կրթական աստիճան, որը հավաստում է բարձրագույն կրթության երկրորդ մակարդակի կրթական ծրագրի ուսումնառության ավարտը,

16) դոկտորի որակավորում (**PhD**)՝ *անձին շնորհվող* գիտական աստիճան, որը հավաստում է բարձրագույն կրթության երրորդ մակարդակի կրթական ծրագրի ուսումնառության ավարտը՝ ներառյալ դոկտորական ատենախոսության պաշտպանությունը,

~~17) ինտեգրված ծրագիր՝ բարձրագույն կրթության իրար հաջորդող երկու կրթական մակարդակներին (բակալավրի և մագիստրոսի որակավորման) համարժեք ուսումնառություն մեկ կրթական ծրագրով, որի ավարտին անձին շնորհվում է երկրորդ մակարդակին համապատասխանող կրթական որակավորում,~~

17) ինտեգրված ծրագիր՝ բարձրագույն կրթության առաջին և երկրորդ մակարդակների անընդհատ հաջորդական համակցված ծրագիր, որի ավարտին անձին շնորհվում է երկրորդ մակարդակի որակավորում,

18) կրթական ծրագիր՝ ուսումնական և հետազոտական բաղադրիչների ամբողջություն, որը սահմանում է բարձրագույն կրթության մակարդակը, կրթական ոլորտի մասնագիտական ուղղվածությունը, բովանդակությունը և ուսումնառության վերջնարդյունքները, որի անվանումը ամրագրվում է ավարտական փաստաթղթում՝ որակավորման հետ մեկտեղ,

19) համատեղ կրթական ծրագիր՝ երկու կամ ավելի բուհերի համագործակցության շրջանակում համատեղ իրականացվող կրթական ծրագիր,

20) համատեղ որակավորում՝ երկու կամ ավելի բուհերի կողմից համատեղ իրականացվող կրթական ծրագրի արդյունքում շնորհված բարձրագույն կրթության որակավորում,

~~21) էլեկտրոնային ուսուցում՝ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմամբ իրականացվող դասավանդման և ուսումնառության գործընթացի կազմակերպման ձև, որի համար պարտադիր չէ ուսանողի և դասավանդողի միաժամանակյա ներկայությունը միևնույն վայրում,~~

21) հեռավար ուսուցում՝ հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման ձև ու դասընթացի իրականացման մեթոդ, որի ընթացքում՝ անմիջական և ոչ անմիջական հաղորդակցումը դասախոսի, դեկավարի (այլ պատասխանատուի) և ուսումնառող անձի (ուսանող, ունկնդիր, մասնակից) միջև իրականացվում է տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների միջոցներով.

22) ակադեմիական բնագավառ՝ բարձրագույն կրթության կրթական ոլորտների և ենթաոլորտների ամբողջություն,

23) կրթական ոլորտ (ենթաոլորտ)՝ գիտելիքի ընդհանուր կազմով հարակից կրթական ծրագրերի ամբողջություն,

24) գիտության ոլորտ՝ գիտահետազոտական և գիտատեխնիկական գործունեության իրականացումն ապահովող տնտեսության ոլորտների ամբողջություն,

25) որակավորումների ոլորտային շրջանակ (այսուհետ՝ ՈՈՇ)՝ որակավորումների ազգային շրջանակին համապատասխան որոշակի կրթական ոլորտի համար ուսումնառության վերջնարդյունքները սահմանող որակավորումների շրջանակ,

26) կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգ (ԿՓԵՀ)՝ եվրոպական բարձրագույն կրթական տարածքում կիրառվող ակադեմիական կրեդիտների հաշվարկման, կուտակման և փոխանցման համակարգ, որն ապահովում է ակադեմիական կրեդիտների համադրելիությունը, փոխանցելիությունը ու դյուրացնում է ուսանողների շարժունությունը և ուղղված է կրթական ծրագրերի ու դասընթացների թափանցիկությանը,

27) ԿՓԵՀ ակադեմիական կրեդիտ (այսուհետ՝ կրեդիտ)՝ դասընթացի կամ ուսումնական մոդուլի ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերման համար ուսանողի ուսումնական բեռնվածության, *այդ թվում՝ գիտական հետազոտությունների, նվաճումների և մասնագիտական աշխատանքային հմտությունների* կատարման չափման պայմանական միավոր,

28) ուսումնական մոդուլ՝ կրթական ծրագրի բաղադրիչ հանդիսացող դասընթացի (դասընթացների խմբի) ինքնուրույն բաղկացուցիչ մաս, որի համար տրվում է կրեդիտ,

29) ուսումնառության վերջնարդյունք՝ դասընթացի կամ կրթական ծրագրի ավարտին *ծեռք բերված* անհրաժեշտ գիտելիք, կարողություններ և հմտություններ *նվազագույն լրակազմ, արդյունքներ,*

30) ամփոփիչ ատեստավորում՝ բարձրագույն կրթության համապատասխան մակարդակի կրթական ծրագրով սահմանված ուսումնառության վերջարդյունքներին շրջանավարտի գիտելիքի, կարողությունների և հմտությունների համապատասխանության ստուգման և գնահատման գործընթաց, որի *դրական* արդյունքում շնորհվում է համապատասխան որակավորում,

31) դիպլոմ (ավարտական փաստաթուղթ)՝ որակավորումը և կրթական կամ գիտական աստիճանը հավաստող պաշտոնական փաստաթուղթ,

32) որակավորման ճանաչում՝ լիազորված մարմնի կողմից *շնորհված օտարերկրյա որակավորման համադրելիության պաշտոնական հավաստում*՝ որակավորումը կրողի մուտքը բարձրագույն կրթության հաջորդ աստիճան, *համապատասխան մակարդակի այլ ծրագիր* կամ աշխատանքային գործունեություն արտոնելու համար,

33) որակի ապահովում՝ որակի ներքին (ներբուհական) և արտաքին գնահատման սահմանված չափանիշներին համապատասխան՝ բուհի և դրա կրթական ծրագրերի մշտադիտարկման, գնահատման և բարելավման շարունակական գործընթաց,

~~34) բուհի ինստիտուցիոնալ (այսուհետ՝ ինստիտուցիոնալ) կամ կրթական ծրագրի (այսուհետ՝ ծրագրային) հավատարմագրում՝ որակի արտաքին գնահատման գործընթաց, որի արդյունքում հավաստվում է բուհի կամ դրա կրթական ծրագրի (կրթական ծրագրերի խմբի) համապատասխանությունը հավատարմագրման սահմանված չափանիշներին,~~

34) բուհի ինստիտուցիոնալ (այսուհետ՝ ինստիտուցիոնալ) հավատարմագրում՝ որակի արտաքին գնահատման պարբերաբար իրականացվող պարտադիր գործընթաց, որի արդյունքում հավաստվում է բուհի տեսակին ներկայացվող օրենսդրությամբ սահմանված պահանջներին և դրանցում իրականացվող կրթական ծրագրի (կրթական ծրագրերի խմբի) համապատասխանությունը հավատարմագրման սահմանված չափանիշներին,

35) ծրագրային հավատարմագրում՝ որակի արտաքին գնահատման գործընթաց, որի արդյունքում հավաստվում է բուհի կողմից կրթական ծրագրի իրականացման համապատասխանությունը ծրագրային հավատարմագրման չափանիշներին,

~~35) ուսումնառության կրթաթոշակ՝ բուհ ընդունելության արդյունքների կամ ուսումնառության ընթացքում ցուցաբերած առաջադիմության հիմքով ուսանողի ուսումնառության վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում,~~

36) ուսումնառության կրթաթոշակ՝ ուսանողին տրամադրվող կրթական ծառայությունների և (կամ) ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում կամ ուսանողին հատկացվող ֆինանսական աջակցություն, որը հատկացվում է ակադեմիական առավելությունների, հասարակական ակտիվության, գիտահետազոտական, գիտատեխնիկական և աշխատանքային կրեդիտների (չափանիշների) համար,

~~36) ուսումնառության նպաստ՝ սոցիալապես խոցելի կամ այլ առանձին խմբերի ուսանողների ուսումնառության վարձի փոխհատուցում,~~

37) ուսումնառության նպաստ՝ ուսանողին տրամադրվող կրթական ծառայությունների և (կամ) ուսման վարձի սոցիալական փոխհատուցում՝ պետական բյուջեի միջոցների, ուսումնական հաստատության, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց հատկացումների հաշվին.

38) ակադեմիական գործունեություն՝ բուհի ուսումնամեթոդական ծրագրերի, Ք աշխատանքների, գիտահետազոտական և *գիտատեխնիկական* գործունեության ամբողջություն,

39) ակադեմիական ազատություն՝ ակադեմիական կազմի և գիտական աշխատողների մտքի ու խոսքի, դասավանդման մեթոդներն ընտրելու,

գիտահետազոտական և **գիտատեխնիկական** գործունեություն իրականացնելու և դրանց արդյունքները հրապարակելու ազատություն,

40) ակադեմիական շարժունություն՝ **որոշակի ժամկետով** ուսանողների ուսումնառության առանձին փուլերի, հետազոտական աշխատանքների կամ **գործնական աշխատանքային ուսուցումը** պրակտիկայի—կազմակերպելու ~~առիթ~~, ինչպես նաև ակադեմիական և վարչական կազմի **կատարելագործումը** վերապատրաստման, հետազոտական և դասավանդման աշխատանքների իրականացումն այլ բուհում կամ գիտական կազմակերպությունում ~~հրապարակելու~~ **հրապարակելու**,

~~40) բուհական ինքնավարություն՝ բուհի իրավասությունն ինքնուրույն սահմանելու և իրականացնելու ակադեմիական և կազմակերպական գործունեություն, մարդկային և ֆինանսական ռեսուրսների կառավարում,~~

41) բուհական ինքնավարություն՝ բուհի ակադեմիական և կազմակերպչական գործառույթները, այդ թվում՝ մարդկային ու ֆինանսատնտեսական ռեսուրսները կառավարելու, դրանց հետ կապված կարգավորումները ինքնուրույն սահմանելու, որոշումներ կայացնելու և իրականացնելու իրավասություններ,

42) գիտական աշխատող՝ գիտական կազմակերպությունում կամ բուհում գիտահետազոտական կամ գիտատեխնիկական գործունեություն իրականացնող, առնվազն մագիստրոսի կամ դրան համարժեք որակավորում ունեցող և գիտական արդյունք ստեղծող անձ,

43) գիտահետազոտական գործունեություն՝ նոր գիտելիքի ստեղծմանը կամ կիրառմանն ուղղված ստեղծագործական համակարգված **աշխատանք** գործունեություն,

44) գիտատեխնիկական գործունեություն՝ տեխնիկայի և տեխնոլոգիաների ու դրանց կիրառության վերաբերյալ նոր գիտելիքի ստեղծմանը, ընդլայնմանը կամ գոյություն ունեցողի գիտելիքի կատարելագործմանն ուղղված ստեղծագործական համակարգված **աշխատանք** գործունեություն,

45) հիմնարար գիտական հետազոտություն՝ բնության, մարդու, հասարակության զարգացման օրինաչափությունների մասին տեսական կամ փորձարարական գիտահետազոտական **աշխատանք** գործունեություն,

46) կիրառական գիտական հետազոտություն՝ գործնական նպատակների իրականացման և կոնկրետ խնդիրների լուծմանն ուղղված գիտահետազոտական կամ գիտատեխնիկական **աշխատանք** գործունեություն,

47) նորարարական (ինովացիոն) գործունեություն՝ գիտության, տնտեսության և հասարակության առաջընթացն ապահովող նոր կամ կատարելագործված տեխնոլոգիական գործընթացի, ծառայության կամ արտադրանքի ստեղծմանն ուղղված գործունեություն,

48) որակավորումների պետական գրանցամատյան (էլեկտրոնային ռեգիստր)՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բուհերում և դրանց մասնաճյուղերում ուսանողների և կլինիկական ռեզիդենտների ակադեմիական առաջխաղացման, շնորհված որակավորման և նրան տրված ավարտական փաստաթղթի տեղեկատվության գրանցման միասնական շտեմարան,

49) բարձրագույն կրթության և գիտության կառավարման տեղեկատվական համակարգ՝ տվյալների հավաքագրման, վերլուծման և տեղեկատվության տարածման միասնական էլեկտրոնային համակարգ, որը ներառում է տեղեկություններ բուհերի և գիտական կազմակերպությունների կառավարման, տնտեսական, ուսումնական և հետազոտական գործընթացների, *ինչպես նաև՝ այդ բնույթի ուսանողների, կլինիկական ռեզիդենտների, ու աշխատողների (այդ թվում՝ գիտական) մասին, այդ թվում՝ միջպետական համագործակցության ծրագրերում ընդգրկված, ուսումնառող կամ աշխատող,*

50) սոցիալական գործընկեր՝ բուհի, գիտական կազմակերպությունների և գործատուների միջև համընդհանուր համաձայնեցված նպատակների իրականացմանը միտված գիտական, աշխատանքային, գործընկերային ու սոցիալական համագործակցության դրսևորման ձև:

Հոդված 4. Բարձրագույն կրթության և գիտության համակարգում

պետական քաղաքականության սկզբունքները, գերակայությունները և ուղղությունները

1. Բարձրագույն կրթության և գիտության համակարգի պետական քաղաքականության սկզբունքներն են՝

- 1) **Բուհերի** ինքնավարությունը և ակադեմիական ազատությունը,
- 2) իրավահավասարությունը և խտրականության բացառումը,
- 3) **Բուհերի կառավարման** թափանցիկությունը և հրապարակայնությունը,
- 4) ակադեմիական և հետազոտական շարժունությունը,
- 5) բարձրագույն կրթության հասանելիությունը և ներառականությունը,
- 6) բարձրագույն կրթության շարունակականությունը,
- 7) **բարձրագույն կրթության շրջանավարտների և ձերք բերված արդյունքների**

մրցունակությունը:

2. Բարձրագույն կրթության և գիտության համակարգի պետական քաղաքականության գերակայություններն են՝

- 1) հայագիտության զարգացումը՝ ի նպաստ հայապահպանության և միջազգային երկխոսության,

2) տնտեսական առաջընթացին և տեխնոլոգիական զարգացմանը նպաստող հետազոտությունների խթանումը,

3) մրցունակ անհատի ձևավորմամբ հասարակության կայուն զարգացմանը նպաստումը,

4) բուհերի, ~~և~~ գիտական կազմակերպությունների, ~~հետ~~ պետության, ~~և~~ մասնավոր հատվածի **կազմակերպությունների միջև սոցիալական գործընկերության խթանումը**, համագործակցության խորացումը,

5) Եվրոպական բարձրագույն կրթության տարածքին և Եվրոպական հետազոտական տարածքին Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության համակարգի ինտեգրումը՝ ազգային կրթական ~~առաջատար~~ **լավագույն** ավանդույթների և նվաճումների պահպանմամբ ու զարգացմամբ, ինչպես նաև միջազգային համագործակցության ընդլայնումը:

3. Բարձրագույն կրթության և գիտության համակարգի պետական քաղաքականությունը ձևավորվում և իրագործվում է հետևյալ ուղղություններով՝

1) մրցունակ բարձրագույն կրթության և գիտության ձևավորում,

2) բարձրագույն կրթության և գիտության համակարգի զարգացում,

3) բարձրագույն կրթության որակի շարունակական բարելավում,

4) որակի ներքին ու արտաքին գնահատման և հավատարմագրման միջազգային չափանիշներին համապատասխան՝ բարձրագույն կրթության որակի ապահովում,

5) բարձրագույն կրթություն ստանալու և հետազոտություններ իրականացնելու համար հավասար ~~միջավայրի~~ ~~և~~ ~~համընդհանուր~~ **հնարավորությունների ու** հասանելիության ապահովում,

6) կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար բարձրագույն կրթություն ստանալու ~~Ֆատչելի պայմանների~~ **կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի** ապահովում,

7) բարձրագույն կրթության համակարգում լրացուցիչ և շարունակական կրթության հնարավորությունների ընդլայնում,

8) բուհերի և գիտական կազմակերպությունների ինքնավարության, կրթական և հետազոտական գործընթացների մասնակիցների ակադեմիական ազատության երաշխավորում,

9) բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստում՝ հաշվի առնելով անձի **նախասիրությունները, զարգացման առանձնահատկությունները, պահանջները**, պետության կարիքները և աշխատաշուկայի պահանջները,

10) գիտական, գիտատեխնիկական և նորարարական գործունեության զարգացման ապահովում և *դրանց իրացման, ճանաչման և արդյունաբերության մեջ ներդրման, և արտադրության հետ դրանց ինտեգրման* նպաստում,

11) բուհերում սովորող անձանց սոցիալական երաշխիքների ապահովում և *նախաձեռնողականության խթանում`* ուսումնառության կրթաթոշակների և *նպաստների* տրամադրման ~~հիմն~~*միջոցով,*

12) գիտության և տեխնոլոգիաների գերակա ուղղությունների սահմանում, դրանց առաջանցիկ զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովում, տնտեսության մեջ նոր գիտական արդյունքների և տեխնոլոգիաների կիրառման խրախուսում,

13) բարձրագույն կրթության, գիտահետազոտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտներում միջազգային համագործակցության ընդլայնման նպաստում,

14) Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության միջազգային հեղինակության *ու գրավչության* բարձրացում,

15) ուսանողների, վարչական և ակադեմիական կազմի ակադեմիական շարժունության խթանում,

16) բուհի և գիտական կազմակերպության աշխատողի աշխատանքային առաջխաղացման համար բարենպաստ պայմանների ստեղծում,

17) ~~սկիզբի~~ ~~համար~~ հայագիտության զարգացման, հայ ազգային արվեստի ու մշակութային ժառանգության ճանաչման և տարածման նպատակով Հայաստանի Հանրապետության բուհերում մասնագետների պատրաստում և նրանց մասնագիտական կարողությունների շարունակական զարգացում,

18) բուհի և գիտական կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությանը և *ֆոնդհայթայթման միջոցառումներին* աջակցում, կրթության և գիտության ոլորտում ներդրումների խրախուսում ու բարենպաստ ներդրումային միջավայրի ապահովում,

19) մտավոր սեփականության իրավական պաշտպանվածության ապահովում և դրա արդյունավետ օգտագործման պայմանների ստեղծում,

20) բուհերին և գիտական կազմակերպություններին գիտահետազոտական, գիտատեխնիկական և նորարարական գործունեության, ինչպես նաև *ուսանողական նախաձեռնությունները խթանելու, սոցիալական աջակցություն ցուցաբերելու, բուհի զարգացման ռազմավարական ծրագրերը ապահովելու նպատակով պետական աջակցության ցուցաբերում` դրամաշնորհների, կրթաթոշակների, նպաստների, վարկավորման, լրացուցիչ ֆինանսավորման միջոցով:* ~~համար, ինչպես նաև ուսումնառության կրթաթոշակների և ուսումնառության նպաստների մատուցման նպատակով աջակցության ցուցաբերում (դրամաշնորհների տրամադրմամբ ու այլ ձևերով):~~

Հոդված 5. Բուհի գործունեության հիմնական ուղղությունները և գործառույթները

1. Բուհի գործունեության հիմնական ուղղություններն են՝

- 1) բարձրագույն կրթության տարբեր մակարդակներում ուսումնական գործընթացի կազմակերպումը և որակյալ, հետազոտահենք կրթության իրականացումը,
- 2) նոր գիտելիքի ստեղծումը, պահպանումը և տարածումը,
- 3) բարձրագույն կրթության որակի շարունակական բարելավումը, դասավանդման, ուսումնառության արդիական մեթոդների ներդրումը և դրանց բազմազանության ապահովումը,
- 4) ապահովել կրթական գործընթացի շարունակականությունը և թափանցիկությունը,
- 5) շահակիցների ներգրավմամբ բարձրագույն կրթության կրթական ծրագրերի մշակումը և հաստատումը,
- 6) բարձրագույն կրթության և գիտահետազոտական գործունեության միջազգայնացումը,
- 7) բարձրագույն կրթության և գիտահետազոտական գործունեության համար պետական և մասնավոր միջոցների ներգրավումը,
- 8) գիտական հետազոտությունների միջազգային մրցունակության ապահովումը,
- 9) ազգային ինքնության և համամարդկային արժեքների արմատավորումը:

2. Բուհի **սույն օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված լիազորություններին համապատասխան կարող է իրականացնել է հետևյալ** հիմնական գործառույթները՝

- 1) կազմակերպել **ուժ և իրականացնում է** ուսանողների, կլինիկական ռեզիդենտների, ներառյալ՝ օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունը՝ **ըստ բուհի կրթական ծրագրերի և որակավորումների**, ~~ինչպես նաև նրանց ուսումնառության ընդհատումը (ազատում, հեռացում, դադարեցում) և ուսանողական իրավունքների վերականգնումը,~~
- 2) կատարում է ուսանողների կրթական ծրագրի մասնակցության (ուսումնառության) ընդհատում (ազատում, հեռացում, դադարեցում), տեղափոխում և ուսանողական իրավունքների վերականգնումը,
- 2) ստեղծել մատչելի միջավայր կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով կրթության կազմակերպման համար,
- 3) մշակում և իրատարակում է ժամանակակից **համապատասխան** ուսումնամեթոդական նյութեր ու գրականություն,
- 4) կազմակերպում է ուսումնական գործընթացը՝ ընտրելով անհրաժեշտ մեթոդները և տեխնոլոգիաները,

5) իրականացնում է ուսանողների **կրեդիտների կուտակման վերջնարդյունքների ձեռքբերման և նախաձեռնողականության** առաջադրման գնահատումը, փոխադրումը հաջորդ կուրս (ակադեմիական տարի) և ամփոփիչ (ավարտական) ատեստավորումը՝ ընտրելով գնահատման ձևերն ու պարբերականությունը,

6) մշակում և հաստատում է ուսումնական, գիտահետազոտական, վարչական, ֆինանսական և տնտեսական գործունեությանն առնչվող, ներառյալ՝ աշխատակազմի ընտրության և նշանակման կարգերը,

7) կազմակերպում է ակադեմիական, գիտական և վարչական կազմի մասնագիտական **կատարելագործման դասընթացներ** և զարգացման **ծրագրեր**, ~~առկա~~ վերապատրաստման դասընթացներ,

8) շնորհում է որակավորումներ և կոչումներ,

9) որոշում է ֆինանսական միջոցների օգտագործման ուղղությունները, կազմում և հաստատում է տարեկան բյուջեն և դրան համապատասխան կատարում ծախսեր,

10) իրականացնում է գիտահետազոտական և նորարարական գործունեություն, ինչպես նաև ստացված արդյունքների առևտրայնացման ուղղությամբ աշխատանքներ,

11) մատուցում է վճարովի կրթական և հետազոտական այլ ծառայություններ, ինչպես նաև իրականացնում է օրենքով չարգելված և իր անմիջական գործունեության հետ առնչվող տնտեսական և ձեռնարկատիրական գործունեություն,

12) ըստ կրթական ծրագրերի սահմանել ուսումնառության վարձերի չափերը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով,

13) ստեղծել **տնտեսական ընկերություններ, հիմնարկներ**, մասնաձյուղեր և կառուցվածքային միավորներ, այդ թվում՝ օտարերկրյա պետություններում, ինչպես նաև հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կառուցվածքային միավորներ,

14) տնօրինել իր գույքը և այդ գույքի վարձակալությունից ստացված եկամուտները,

15) տնօրինել և իր հայեցողությամբ օգտագործել պետական բյուջեից հատկացված ու տվյալ տարում չօգտագործված ֆինանսական միջոցները, եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ,

16) մշակել և հաստատել գնումների իր ընթացակարգը և դրանց համաձայն կատարել գնումները, բացառությամբ՝ պետական բյուջեից տրամադրված միջոցների,

17) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենքներով և իր կանոնադրությամբ չարգելված այլ գործունեություն:

Հոդված 6. Բուհական ինքնավարությունը և հաշվետվողականությունը

~~1. Բուհն իրացնում է իր ինքնակառավարման իրավունքը՝ բուհական ինքնավարության, ակադեմիական և հետազոտությունների ազատության և կոլեգիալության սկզբունքներով՝ հաշվետվողականության պահանջների պահպանմամբ:~~

1. Բուհը իր գործունեությունը իրականացնում է ինքնակառավարման իրավունքի լիարժեք իրացման միջոցով՝ բուհական ինքնավարության, ակադեմիական և հետազոտությունների ազատության, կոլեգիալության սկզբունքներով՝ պահպանելով հաշվետվողականության պահանջները:

2. Բուհը սույն օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան ունի՝

1) ակադեմիական գործունեության ինքնավարություն՝ իր կրթական և գիտահետազոտական գործառույթներն ինքնուրույն սահմանելու, կազմակերպելու, իրականացնելու և կառավարելու իրավասություն,

2) կազմակերպական գործունեության ինքնավարություն՝ իր կառուցվածքը, կառուցվածքային միավորները ինքնուրույն սահմանելու, իրավաբանական անձ ստեղծելու, ինչպես նաև ներքին կառավարչական կարգերը և ընթացակարգերն ինքնուրույն հաստատելու իրավասություն,

3) մարդկային ռեսուրսների կառավարման ինքնավարություն՝ իր ակադեմիական, վարչական, տնտեսական և օժանդակ կազմի ընտրության, նշանակման, առաջխաղացման և ազատման գործառույթներն ինքնուրույն սահմանելու, կազմակերպելու և կառավարելու իրավասություն,

4) ֆինանսական ռեսուրսների կառավարման ինքնավարություն՝ ինքնուրույն իր բյուջեն ձևավորելու, ֆինանսական և այլ միջոցները կառավարելու, եկամուտները ձևավորելու և ծախսեր կատարելու իրավասություն:

3. Բուհի կառուցվածքային միավորների կառավարման և ֆինանսական իրավահարաբերությունները կարգավորվում են բուհի կանոնադրությամբ՝ ապահովելով դրանց կառավարման և ֆինանսական ինքնուրույնության վերաբերյալ դրույթներ:

4. Երևանի պետական համալսարանը Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթության, գիտության և մշակույթի բացառիկ հաստատություն է, որի կարգավիճակի, գործունեության և ֆինանսավորման առանձնահատուկությունները սահմանում է Կառավարությունը:

5. 7. Բուհի գործունեության համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը և իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներին վերահսկում են բուհի հիմնադիրը (հիմնադիրները), պետական կառավարման համապատասխան լիազոր մարմինը և օրենքով սահմանված կարգով լիազորված այլ մարմիններ:

6. Բուհը յուրաքանչյուր տարի՝ մինչև տվյալ տարվա ~~ապրիլի~~ *մայիսի* 1-ը, իր կայքում հրապարակում է նախորդ տարվա իր գործունեության, ներառյալ՝ ֆինանսական և բուհի ռազմավարական ծրագրի իրականացման արդյունքների մասին հաշվետվությունները, իսկ մինչև հուլիսի 1-ը՝ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը:

~~4. Բուհը մշակում և հրապարակում է հնգամյա ռազմավարական ծրագիրն ու ակադեմիական բարեվարքության կանոնակարգը:~~

7.—5. Բուհը յուրաքանչյուր տարի՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը, իր կայքում հրապարակում է կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների մասին տեղեկատվությունը:

~~6. Բուհի կառուցվածքային միավորների կառավարման և ֆինանսական հրավահարաբերությունների կարգավորվում են բուհի կանոնադրությամբ:~~

8.—4. Բուհը մշակում և հրապարակում է (թարմացնում է) իր գործունեությանն առնչվող և իր կողմից սահմանված նորմատիվ իրավական ակտերը և ներքին ակտերը, այդ թվում՝ զարգացման ռազմավարական և տարեկան ծրագրերը, ակադեմիական բարեվարքության կանոնակարգը, կրթական ոլորտների և մասնագիտական որակավորումների կրթական չափորոշիչները, կրթական ծրագրերը, ուսումնամեթոդական և ներքին կարգապահական կանոնները, ուսնողների հեռացման և պատասխանատվության ենթարկելու դեպքերը, վերականգման, տեղափոխման կարգը, սահմանված ծառայությունների ցանկը, դրանց կազմակերպման ընթացակարգերը, գնացուցակը և իրականացման պայմանները և այլն:

Հոդված 7. Գիտական կազմակերպությունը

1. Գիտական կազմակերպությունը սույն օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված լիազորությունների շրջանակներում՝

1) ինքնուրույն է գիտահետազոտական կամ գիտատեխնիկական կամ նորարարական գործունեության կազմակերպման, գիտական աշխատողների ատեստավորման ձևերի և պարբերականության ընտրության հարցերում,

2) որոշում է բոլոր տարակարգերի աշխատողների հաստիքացուցակը, ինքնուրույն իրականացնում է աշխատողների մրցութային ընտրությունը և բաշխումը,

3) կարող է այլ գիտական կազմակերպությունների կամ բուհերի հետ ստեղծել համագործակցային ցանցեր (կոնսորցիումներ) կամ անդամակցել դրանց՝ գիտահետազոտական, գիտատեխնիկական կամ նորարարական խնդիրների համատեղ լուծման նպատակով,

2. Գիտական կազմակերպությունը՝

1) կազմակերպում և իրականացնում է գիտահետազոտական կամ գիտատեխնիկական գործունեություն,

2) բուհի հետ համատեղ ապահովում է բարձրագույն կրթության երկրորդ կամ երրորդ մակարդակներում կրթության իրականացումը,

3) ըստ կառուցվածքային միավորների բաշխում է գիտական կազմակերպության աշխատողներին,

4) կազմակերպում է գիտական աշխատողների մասնագիտական կարողությունների զարգացման գործընթացը,

5) իրականացնում է օրենքով և իր կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

3. **Գիտական կազմակերպությունն** օտարերկրյա կամ միջազգային կազմակերպությունների հետ կարող է իրականացնել համատեղ գիտական գիտական, գիտակրթական ու հետազոտական աշխատանքներ և ծրագրեր:

4. **Գիտական կազմակերպությունը** յուրաքանչյուր տարի՝ մինչև տվյալ տարվա ~~ապրիլի~~ **մայիսի** 1-ը, իր կայքում հրապարակում է նախորդ տարվա իր գործունեության, ներառյալ՝ ֆինանսական և գիտական կազմակերպության ռազմավարական ծրագրի իրականացման արդյունքների մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը:

5. **Գիտական կազմակերպությունը** մշակում և հրապարակում է իր ռազմավարական ծրագիրն ու ակադեմիական բարեվարքության կանոնակարգը:

6. **Գիտական կազմակերպության** գործունեության համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը և իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներին վերահսկում են գիտական կազմակերպության հիմնադիրը (հիմնադիրները), պետական կառավարման համապատասխան լիազոր մարմինը և օրենքով սահմանված կարգով լիազորված այլ մարմիններ:

ԳԼՈՒԽ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հոդված 8. Բարձրագույն կրթության և գիտության համակարգը, բուհերի և գիտական կազմակերպությունների տարատեսակները

Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության համակարգը ներառում է՝

1) բարձրագույն կրթության և գիտության համակարգի պետական կառավարման մարմինները և այն կազմակերպությունները, որոնք բարձրագույն կրթության և գիտության համակարգում իրականացնում են համապատասխան գործառնություններ,

2) բուհերը և գիտական կազմակերպությունները,

3) լիցենզավորման գործընթացները և չափանիշները,

4) ինստիտուցիոնալ ու ծրագրային հավատարմագրման գործընթացները և չափանիշները,

6) որակավորումների ազգային շրջանակը, որակավորումների ոլորտային շրջանակները, հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերը,

7) ուսումնառության արդյունքների ճանաչմանը, գնահատմանը և որակավորումների շնորհմանն առնչվող չափանիշները և գործընթացները,

8) որակավորումների պետական գրանցամատյանը:

2. Հայաստանի Հանրապետությունում գործող բուհերի ու գիտական կազմակերպությունների տարատեսակները, դրանց դասակարգման չափանիշները և պահանջները սահմանում է Կառավարությունը՝ հիմք ընդունելով դրանց գործունեության ուղղվածությունը, բարձրագույն կրթության մակարդակներն ու կրթական ոլորտները և այլ չափանիշներ:

Հոդված 9. Բարձրագույն կրթության կրթական ծրագրերը և դրանց ներկայացվող ընդհանուր պահանջները, ուսումնառության ժամկետները

1. Բարձրագույն կրթության կրթական ծրագրերը կազմվում են ՈԱՇ և ՈՈՇ-ների պահանջներին համապատասխան:

2. Յուրաքանչյուր կրթական ծրագրի (ներառյալ՝ համատեղ իրականացվող կրթական ծրագրի) համար բուհը կազմում և հաստատում է կրթական ծրագրի նկարագիր, որը ներառում է ծրագրին ներկայացվող հետևյալ ընդհանուր պահանջները՝

1) կրթական ծրագրի նպատակը, խնդիրները և ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները,

2) կրթական ծրագրին ներկայացվող մուտքային և ելքային (ներառյալ՝ ամփոփիչ ատեստավորման ձևերը և պարբերականությունը) պահանջները,

3) ***ուսանողի*** ուսումնական բեռնվածության ընդհանուր ծավալը՝ արտահայտված կրեդիտներով, և ուսումնառության նվազագույն տևողությունը,

4) ծրագրի բովանդակությունը՝ որակավորումն ապահովող դասընթացների ***կամ մոդուլների*** ցանկը և յուրաքանչյուր դասընթացին ***կամ մոդուլին*** հատկացված կրեդիտը,

5) շնորհվող որակավորումը և հետագա մասնագիտական գործունեության հնարավոր ոլորտը:

3. Բուհի կրթական ծրագրերն երաշխավորում են բարձրագույն կրթության տարբեր կրթական մակարդակներում ուսանողների ուսումնառության գործընթացը՝ ապահովելով ԿՓԵՀ-ի կիրարկումը և որակավորման աստիճանների շնորհումը: Այն բուհերը, որոնք ուսումնական գործընթացը կազմակերպում են այլ կրեդիտային համակարգով, պետք է բուհի կողմից սահմանված կարգով կիրառեն վերջինիս փոխարկման մեթոդաբանությունը՝ ԿՓԵՀ-ին համադրելիությունն ապահովելու համար:

4. Կրթական ծրագրերը՝ ըստ բարձրագույն կրթության մակարդակների, կարող են իրականացվել լրիվ կամ մասնակի բեռնվածությամբ՝ ***բացառությամբ ռազմական բարձրագույն կրթության ծրագրերի, որոնց առաջին և երկրորդ մակարդակների կրթական ծրագրերն իրականացվում են միայն լրիվ բեռնվածությամբ:***

~~5. Էլեկտրոնային ուսուցման գործիքների միջոցով իրականացվող լրիվ կամ մասնակի բեռնվածությամբ կրթական ծրագրերը պետք է համապատասխանեն սույն օրենքով բարձրագույն կրթության կրթական ծրագրերին ներկայացվող պահանջներին:~~

~~6. Էլեկտրոնային ուսուցումը կազմակերպվում է ուսումնական գործընթացի էլեկտրոնային կառավարման համակարգերի միջոցով:~~

~~7. Էլեկտրոնային ուսուցումն իրականացվում է համաժամանակյա (ուսումնական գործընթացի մասնակիցները հաղորդակցվում են իրական ժամանակում՝ նույն կամ տարբեր վայրերում) կամ տարաժամանակյա եղանակներով:~~

8. Բուհերում դասավանդման լեզուն գրական հայերենն է: Բուհի կողմից սահմանված կարգով ուսումնական մոդուլներ, դասընթացներ կամ դասընթացների առանձին թեմաներ կարող են դասավանդվել օտար լեզվով:

9. Բարձրագույն կրթության առաջինից երրորդ մակարդակների կրթական ծրագրերով օտար լեզվով ուսուցման կազմակերպումը հնարավոր է նաև,

1) եթե կրթական ծրագրի մասնագիտական ուղղվածությունը ենթադրում է օտար լեզվի ուսումնառություն,

2) եթե դասընթացն իրականացվում է օտարերկրյա մասնագետի կողմից,

3) օտարերկրյա պետության բուհերի հետ համատեղ իրականացվող կրթական ծրագրերի դեպքում,

4) օտարերկրյա քաղաքացիների համար իրականացվող կրթական ծրագրերի դեպքում:

7. Բարձրագույն կրթության բոլոր մակարդակներում՝ որակավորման համար (աստիճանաշնորհող ծրագրերում) ուսանողի տարեկան լրիվ ուսումնական բեռնվածությունը առավելագույնը 60 կրեդիտ է:

8. Բարձրագույն կրթության մակարդակներում (այդ թվում՝ ինտեգրված և համատեղ), որակավորում շնորհող կրթական ծրագրերի բեռնածության կրեդիտները և

ուսումնառության նորմատիվային տևողությունը՝ ըստ լրիվ և մասնակի բեռնվածության, բաշխվում է հետևյալ համամասնությամբ.

1) Առաջին մակարդակում բակալավրի որակավորում ստանալու համար.

1.1) ուսուցման տևողությունը՝ առնվազն 3 տարի: Լրիվ բեռնվածությամբ ուսումնառելու դեպքում՝ այն կարող է երկարացվել մինչև 2 տարի, մասնակի բեռնվածության դեպքում՝ մինչև 4 տարի,

1.2.) բեռնվածությունը՝ ոչ պակաս 180 և ոչ ավելի 240 կրեդիտ,

2) Երկրորդ մակարդակում մագիստրոսի որակավորում ստանալու համար.

2.1.) ուսուցման տևողությունը՝ առնվազն 1 տարի: Լրիվ բեռնվածությամբ ուսումնառելու դեպքում՝ այն կարող է երկարացվել մինչև 1 տարի, իսկ մասնակի բեռնվածության դեպքում՝ մինչև 2 տարի,

2.2) բեռնվածությունը՝ ոչ պակաս 60 և ոչ ավելի 120 կրեդիտ,

3) Երրորդ մակարդակում դոկտորի առաջին աստիճանի որակավորում ստանալու համար.

3.1) Ուսուցման տևողությունը՝ առնվազն 3 տարի,

3.2) Բեռնվածությունը՝ 180 կրեդիտ,

4) Առաջին և երկրորդ մակարդակներում ինտեգրված ծրագրով մագիստրոսի որակավորում ստանալու համար.

4.1) տևողություն՝ որոշվում է ըստ կրթական ծրագրի, ակադեմիական խորհրդի կողմից,

4.2.) բեռնվածությունը ոչ պակաս, քան 300 կրեդիտ է: Լրիվ բեռնվածությամբ ուսումնառելու դեպքում՝ այն կարող է երկարացվել մինչև 1 տարի, իսկ մասնակի բեռնվածության դեպքում՝ մինչև 2 տարի,

5) Համատեղ կրթական ծրագրերով ուսումնառող ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը և ուսման ընդհանուր տևողությունը սահմանում է բուհի ակադեմիական խորհուրդը՝ սույն հոդվածի դրույթներին համապատասխան:

9. Լրիվ կամ մասնակի բեռնվածության միջակայքերը առաջարկում է բուհի ակադեմիական խորհուրդը:

10. Լրիվ բեռնվածությամբ ուսումնառող ուսանողը պարտավոր է բուհի տվյալ կրթական ծրագրով սահմանված ուսուցման համար նախատեսված ժամկետում կուտակել տարեկան ուսումնական բեռնվածության առնվազն 75 տոկոսին համապատասխան գումարային կրեդիտներ, իսկ մասնակի բեռնվածությամբ ուսումնառող ուսանողը՝ տարեկան ուսումնական բեռնվածության առնվազն 50 տոկոսին համապատասխան գումարային կրեդիտներ:

11. Բարձրագույն կրթության բոլոր մակարդակների (այդ թվում՝ ինտեգրված և համատեղ) ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցը՝ ըստ սահմանված ուսուցման տևողությունների, դրա սկզբի, ավարտի, ուսանողի արձակուրդի, գիտական հետազոտության և աշխատանքային ուսուցման տևողությունների, սահմանվում է բուհի ակադեմիական խորհուրդը՝ կրթական ծրագրով և ուսումնական պլանով:

~~18. Կրթական ծրագիրն ավարտելու համար ուսումնառության ընդհանուր ժամանակահատվածում սահմանված կրեդիտներն ուսանողի կողմից չկուտակելու պարագայում կրթությունը ընդհատած ուսանողի ուսումնառության շարունակման դեպքում, տվյալ կրթական ծրագրի վերջնարդյունքների փոփոխությամբ պայմանավորված՝ լրացուցիչ կրեդիտների կուտակման անհրաժեշտությունը քննարկվում է բուհի ակադեմիական խորհրդի կողմից սահմանված կարգով:~~

12² Եթե ուսանողի կրթությունը տարբեր պատճառներով ընդհատվել է և նա ցանկություն է հայտնել վերականգնվել և ուսումնառությունը շարունակել, ապա կատարվում է նրա ուսումնառած և այդ պահին գործող կրթական ծրագրով սահմանված վերջնարդյունքների համեմատություն: Ակադեմիական տարբերության առակայության դեպքում՝ բուհի ակադեմիական խորհրդի սահմանած ընթացակարգով քննարկվում է բացակա կրեդիտներ լրացուցիչ կուտակելու հարցը և որոշվում է նրա վերականգնման հարցը:

13. Ուսումնառությունը չավարտած անձին տրվում է ակադեմիական տեղեկանք ձեռք բերված ուսումնառության արդյունքների և կուտակած կրեդիտների վերաբերյալ:

~~11. Առաջին մակարդակի որակավորում շնորհող կրթական ծրագրերի բեռնվածությունը ոչ պակաս 180 և ոչ ավելին, քան 240 կրեդիտ է, բացառությամբ բարձրագույն ռազմաուսումնական հաստատությունների կրթական ծրագրերի: Բակալավրի որակավորում ստանալու համար ուսուցման տևողությունը առնվազն 3 տարի է:~~

~~12. Երկրորդ մակարդակի որակավորում շնորհող կրթական ծրագրերի բեռնվածությունը ոչ պակաս 60 և ոչ ավելին, քան 120 կրեդիտ է: Մագիստրոսի որակավորում ստանալու համար ուսուցման տևողությունը առնվազն 1 տարի է:~~

~~13. Երրորդ մակարդակի որակավորում շնորհող գիտակրթական ծրագրերի բեռնվածությունը 180 կրեդիտ է: Դոկտորի որակավորում ստանալու համար ուսուցման տևողությունը առնվազն 3 տարի է:~~

~~14. Բարձրագույն կրթության ինտեգրված ծրագրով կրթական ծրագրերի բեռնվածությունը ոչ պակաս, քան 300 կրեդիտ է:~~

15. Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում բոլոր կրթական մակարդակների աստիճանաշնորհող ծրագրերում ուսանողի տարեկան ուսումնական լրիվ բեռնվածությունը առավելագույնը 60 կրեդիտ է:

16. Լրիվ բեռնվածությամբ ուսումնառող ուսանողը պարտավոր է բուհի տվյալ կրթական ծրագրով սահմանված ուսուցման համար նախատեսված ժամկետում կուտակել տարեկան ուսումնական բեռնվածության առնվազն 75 տոկոսին համապատասխան գումարային կրեդիտներ, իսկ մասնակի բեռնվածությամբ ուսումնառող ուսանողը՝ տարեկան ուսումնական բեռնվածության առնվազն 50 տոկոսին համապատասխան գումարային կրեդիտներ: Լրիվ բեռնվածությամբ ուսանողի ուսումնառության ընդհանուր տևողությունը բակալավրի որակավորում ստանալու համար կարող է երկարացվել մինչև 2, մագիստրոսի՝ մինչև 1, իսկ ինտեգրված ծրագրով՝ մինչև 1 ուսումնական տարով:

17. Մասնակի բեռնվածությամբ ուսումնառող ուսանողի ուսումնառության ընդհանուր տևողությունը բակալավրի որակավորում ստանալու կարող է երկարացվել մինչև 4, մագիստրոսի՝ մինչև 2, իսկ ինտեգրված ծրագրով՝ մինչև 2 ուսումնական տարով:

18. Կրթական ծրագիրն ավարտելու համար ուսումնառության ընդհանուր ժամանակահատվածում սահմանված կրեդիտներն ուսանողի կողմից չկուտակելու պարագայում կրթությունը ընդհատած ուսանողի ուսումնառության շարունակման դեպքում, տվյալ կրթական ծրագրի վերջնարդյունքների փոփոխությամբ պայմանավորված՝ լրացուցիչ կրեդիտների կուտակման անհրաժեշտությունը քննարկվում է բուհի ակադեմիական խորհրդի կողմից սահմանված կարգով:

19. Համատեղ կրթական ծրագրերով ուսումնառող ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը և ուսման ընդհանուր տևողությունը սահմանում է բուհի ակադեմիական խորհուրդը՝ սույն օրենքի դրույթներին համապատասխան:

20. Ուսումնառությունը չավարտած անձին տրվում է ակադեմիական տեղեկանք ուսումնասիրած առարկաների և կուտակված կրեդիտների վերաբերյալ:

21. Բարձրագույն ռազմաուսումնական հաստատությունների առաջին և երկրորդ մակարդակների կրթական ծրագրերն իրականացվում են միայն լրիվ բեռնվածությամբ՝ բակալավրի կամ մագիստրոսի որակավորում ստանալու համար տվյալ կրթական ծրագրով սահմանված ուսուցման ընդհանուր տևողության ժամկետներին համապատասխան:

Հոդված 10. Բարձրագույն կրթության մակարդակները և որակավորումները

1. Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթությունն իրականացվում է իրար հաջորդող երեք կրթական մակարդակներում՝ աստիճանաշնորհող հիմնական կրթական ծրագրերով, ինչպես նաև աստիճան չշնորհող լրացուցիչ ծրագրերով.

1) առաջին մակարդակում ուսումնառությունն ամփոփվում է ամփոփիչ ատեստավորմամբ և ուսումնառությունն ավարտած անձին շնորհվում է բակալավրի որակավորում,

2) երկրորդ մակարդակում ուսումնառությունն ամփոփվում է ամփոփիչ ատեստավորմամբ և ուսումնառությունն ավարտած անձին շնորհվում է մագիստրոսի որակավորում,

3) երրորդ մակարդակում ուսումնառությունն ամփոփվում է դոկտորական ատենախոսության պաշտպանությամբ, որի արդյունքում անձին շնորհվում է դոկտորի աստիճանի որակավորում:

2. Բարձրագույն կրթության աստիճանաշնորհող կրթական ծրագրերը կարող են իրականացվել նաև ինտեգրված ծրագրով:

3. Ինտեգրված ծրագրի ուսումնառության վերջնարդյունքները համապատասխանում են երկրորդ մակարդակի համար սահմանված վերջնարդյունքներին և ուսումնառությունն ամփոփվում է ամփոփիչ ատեստավորմամբ:

~~6. Ինստիտուցիոնալ հավատարմագրում ունեցող բուհում բարձրագույն կրթության հաջորդ կրթական մակարդակում սահմանված կարգով ուսումնառությունը շարունակելու իրավունք ունեն միայն այն անձինք, որոնք ստացել են բարձրագույն կրթության նախորդ մակարդակի որակավորում ինստիտուցիոնալ հավատարմագրում ունեցող բուհից: տեղափոխվել է~~

4. Բարձրագույն կրթության երրորդ մակարդակում ուսումնառությունը բուհն իրականացնում է ինքնուրույն կամ գիտական կազմակերպության **կամ սոցիալական գործընկերության կողմ հանդիսացող կազմակերպության, այդ թվում՝ պետական մարմնի** հետ համատեղ:

Հոդված 11. Կլինիկական ռեզիդենտուրան (կլինիկական օրդինատուրան)

~~2. 5. Բարձրագույն կրթության ինտեգրված ծրագրով ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած անձին շնորհվում է երկրորդ մակարդակի որակավորում՝ մագիստրոսի կամ դրան համարժեք որակավորման շնորհմամբ, իսկ ինտեգրված բժշկական ծրագրով ուսումնառած անձին՝ «բժիշկ» (ծրագրի բեռնվածությունը՝ 360 կրեդիտ) կամ «բժիշկ ստոմատոլոգ» (ծրագրի բեռնվածությունը՝ 300 կրեդիտ) որակավորում:~~

~~6. Ինստիտուցիոնալ հավատարմագրում ունեցող բուհում բարձրագույն կրթության հաջորդ կրթական մակարդակում սահմանված կարգով ուսումնառությունը շարունակելու հրավումք ունեն միայն այն անձինք, որոնք ստացել են բարձրագույն կրթության մախորդ մակարդակի որակավորում ինստիտուցիոնալ հավատարմագրում ունեցող բուհից: տեղափոխվել է~~

1. 7. Կլինիկական ռեզիդենտուրան (կլինիկական օրդինատուրա) ինտեգրված կամ դրան համարժեք բարձրագույն բժշկական կրթությանը հաջորդող կրթության ծրագրային փուլ է, որի արդյունքում ուսումնառողը ձեռք է բերում տվյալ մասնագիտական ուղղության համար անհրաժեշտ մասնագիտացված տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ՝ տվյալ մասնագիտական ուղղությամբ ինքնուրույն գործունեություն իրականացնելու համար:

8. Կլինիկական ռեզիդենտուրայի ընդունելությանը և ամփոփիչ ատեստավորմանը ներկայացվող պահանջները, կազմակերպման չափանիշները և առանձնահատկությունները, ինչպես նաև մասնագիտական ուղղություններին ներկայացվող պահանջները՝ վերջնարդյունքները, սահմանում է Կառավարությունը՝ առողջապահության ոլորտի պետական լիազոր մարմնի ներկայացմամբ՝ համաձայնեցված կրթության ոլորտի պետական լիազոր մարմնի հետ:

~~9. Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա պետությունների ռազմաբժշկական բուհերում կամ դրանց ստորաբաժանումներում, ինչպես նաև պաշտպանության ոլորտի պետական լիազոր մարմնի պատվերով բարձրագույն բժշկական կրթության ինտեգրված կամ համարժեք ծրագրով ուսուցումն անցած շրջանավարտների համար սահմանվում է ռազմական բժշկական կրթության կլինիկական ռեզիդենտուրա՝ մեկ տարի տևողությամբ, որի ամփոփիչ ատեստավորումը հանձնելուց հետո անձին շնորհվում է «բժիշկ մասնագետ» որակավորում՝ «ընդհանուր բժշկական գործունեություն զինված ուժերում» մասնագիտական ուղղությամբ:~~

10. Ռազմական բժշկական կրթության կլինիկական ռեզիդենտուրա ավարտած զինծառայողը հետագայում այլ կրթական ծրագրով կլինիկական ռեզիդենտուրա կարող է անցնել պաշտպանության ոլորտի պետական լիազոր մարմնի, կրթության և առողջապահության ոլորտների պետական լիազոր մարմինների ղեկավարների համատեղ սահմանած կարգով:

2.—5. Բարձրագույն կրթության ինտեգրված ծրագրով ավարտած և ամփոփիչ ատեստավորումն անցած անձին շնորհվում է երկրորդ մակարդակի որակավորում՝ մագիստրոսի կամ դրան համարժեք որակավորման շնորհմամբ, իսկ ինտեգրված բժշկական ծրագրով ուսումնառած անձին՝ «բժիշկ» (ծրագրի բեռնվածությունը՝ 360

կրեդիտ) կամ «բժիշկ-ստոմատոլոգ» (ծրագրի բեռնվածությունը՝ 300 կրեդիտ) որակավորում:

11. Կլինիկական ռեզիդենտուրայի ծրագիրն ամփոփվում է ամփոփիչ ատեստավորմամբ, որը հաջողությամբ հանձնելուց հետո անձին շնորհվում է տվյալ մասնագիտական ուղղությամբ «բժիշկ-մասնագետ» որակավորում և տրվում է շնորհված որակավորումը հավաստող դիպլոմ:

9. Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա պետությունների ռազմաբժշկական բուհերում կամ դրանց ստորաբաժանումներում, ինչպես նաև պաշտպանության ոլորտի պետական լիազոր մարմնի պատվերով բարձրագույն բժշկական կրթության ինտեգրված կամ համարժեք ծրագրով ուսուցումն անցած շրջանավարտների համար սահմանվում է ռազմական բժշկական կրթության կլինիկական ռեզիդենտուրա՝ մեկ տարի տևողությամբ, որի ամփոփիչ ատեստավորումը հանձնելուց հետո անձին շնորհվում է «բժիշկ-մասնագետ» որակավորում՝ «ընդհանուր բժշկական գործունեություն զինված ուժերում» մասնագիտական ուղղությամբ:

10. Ռազմական բժշկական կրթության կլինիկական ռեզիդենտուրա ավարտած զինծառայողը հետագայում այլ կրթական ծրագրով կլինիկական ռեզիդենտուրա կարող է անցնել պաշտպանության ոլորտի պետական լիազոր մարմնի, կրթության և առողջապահության ոլորտների պետական լիազոր մարմինների ղեկավարների համատեղ սահմանած կարգով:

12. Կլինիկական ռեզիդենտուրան կազմակերպում է բժշկական կրթական և գիտահետազոտական գործունեություն իրականացնող հանրային կազմակերպությունը:

13. Կլինիկական ռեզիդենտուրայի մասնագիտական ուղղությունների (ըստ՝ մասնագիտությունների, նեղ մասնագիտությունների) ցանկը և դրանց տևողությունները հաստատում է Կառավարությունը՝ առողջապահության ոլորտի պետական լիազոր մարմնի ներկայացմամբ՝ համաձայնեցված կրթության ոլորտի պետական լիազոր մարմնի հետ:

Հոդված 12. 11. Բարձրագույն կրթության համատեղ կրթական ծրագրերի իրականացումը

~~1. Համատեղ կրթական ծրագրի արդյունքում շնորհված համատեղ որակավորումը հավաստվում է մասնակից բուհերի կողմից շնորհված միասնական դիպլոմով կամ մասնակից բուհերից մեկի կամ մեկից ավելիի կողմից շնորհվող առանձին դիպլոմներով: Է տեղափոխել վերջին կետ~~

1.-2. Համատեղ կրթական ծրագիրը կարող է իրականացվել միայն բարձրագույն կրթության նույն մակարդակում:

2.—3. Համատեղ կրթական ծրագրին մասնակից յուրաքանչյուր ~~բաժնի~~ **կողմ** պետք է ունենա ~~սպիտակ~~ **իր** երկրի օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան կրթական ծրագրով կրթություն իրականացնելու և համապատասխան որակավորում շնորհելու իրավունք, ինչպես նաև ունենա ինստիտուցիոնալ կամ տվյալ կրթական ծրագրի համար ծրագրային հավատարմագրում:

3.—4. Համատեղ կրթական ծրագրի մասնակից բուհերը կամ գործընկեր կազմակերպությունները (**առկայության դեպքում**), ձևավորում են կոնսորցիում և համագործակցության շրջանակներում կնքում համապատասխան պայմանագիր, որը սահմանում է **մասնակից կողմերի** ~~յուրաքանչյուրի~~ իրավունքներն ու պարտավորությունները և համատեղ կրթական ծրագիր իրականացնելու իրավական, ֆինանսական ու կազմակերպական հիմքերը, **ինչպես նաև շրջանավարտների փոխձանաչման շրջանակը:**

4.—5. Կոնսորցիումի անդամ բուհը դիպլոմ է շնորհում, եթե իրականացնում է համատեղ ծրագրի մասնագիտական դասընթացների առնվազն 25 տոկոսը:

5.—6. Համատեղ կրթական ծրագրերի իրականացման կարգը հաստատվում է բուհի ակադեմիական խորհրդը և **ներկայացնում տվյալ գործընկեր բուհի կամ կազմակերպության հավանությանը:**

6. Համատեղ կրթական ծրագրի արդյունքում շնորհված համատեղ որակավորումը հավաստում են մասնակից բուհերը՝ շնորհված միասնական դիպլոմով կամ մասնակից բուհերից մեկի կամ մեկից ավելիի կողմից շնորհվող առանձին դիպլոմներով:

Հոդված 13. 12. Բարձրագույն կրթության դիպլոմը և դրա հավելվածը

1. Բարձրագույն կրթության առաջին և երկրորդ մակարդակների կրթական ծրագրերով, ինչպես նաև ինտեգրված ծրագրով կրթական ծրագրի ավարտին և ամփոփիչ ատեստավորման դրական արդյունքի հիման վրա, անձին տրվում է շնորհված որակավորումը հավաստող դիպլոմ և հավելված (դիպլոմին կից տրվող համաեվրոպական ձևաչափի փաստաթուղթ):

2. Բարձրագույն կրթության երրորդ մակարդակի ծրագրերով ուսումնառության ավարտին, ամփոփիչ ատեստավորման և ատենախոսության պաշտպանության արդյունքում անձին շնորհվում է գիտական աստիճանը հավաստող դիպլոմ:

3. Բարձրագույն կրթության որակավորման աստիճան չշնորհող կրթական ծրագրի ավարտին անձին տրվում է բուհի կողմից սահմանված ձևանմուշով ուսումնառությունը հավաստող վկայական կամ հավաստագիր:

4. Դիպլոմի՝ այդ թվում՝ համատեղ դիպլոմի, պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման, գրանցման և պահպանման կարգը սահմանում է լիազոր մարմնի ղեկավարը:

5. Դիպլոմները և դրանց հավելվածները բուհի կողմից տրամադրվում են անվճար:

6. Բարձրագույն կրթության առաջինից երրորդ մակարդակներով շնորհվող որակավորումները, ինչպես նաև կլինիկական ռեզիդենտի որակավորումը հավաստող դիպլոմների (այդ թվում՝ համատեղ դիպլոմի) և հավելվածի ձևերը լիազոր մարմնի ներկայացմամբ հաստատում է Կառավարությունը:

Հոդված 14. ~~13.~~ Օտարերկրյա որակավորումների ճանաչումը

~~1. Օտարերկրյա ուսումնական հաստատությունների կողմից շնորհված որակավորումները ճանաչվում և գնահատվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության ու «Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթությանը վերաբերող որակավորումների ճանաչման մասին» կոնվենցիայի (Լիսաբոնի ճանաչման կոնվենցիա), այդ բնագավառում Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների միջև կնքված միջազգային պայմանագրերի համաձայն՝ ճանաչման՝ իր գործառույթներում անկախ մասնագիտացված կառույցի միջոցով:~~

1. Անհատներին շնորհված որակավորումները ճանաչվում և գնահատվում են այդ բնագավառում Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված ճանաչման վերաբերյալ կոնվենցիաների, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների միջև կնքված միջազգային պայմանագրերի և այլ իրավական ակտերի համաձայն՝ իր գործառույթներում անկախ մասնագիտացված կառույցի կողմից տրված տեղեկատվության (խորհրդատվության) հիման վրա:

2. Փախստականների, տեղահանված անձանց և փախստականի կարգավիճակ ունեցող, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց որակավորումները ճանաչվում են սույն հոդվածի 1-ին մասի համաձայն, իսկ այն դեպքերում, երբ անձի ձեռք բերված որակավորումը չի կարող ապացուցվել փաստաթղթի միջոցով, ապա որակավորման ճանաչման գործընթացն իրականացվում է լիազոր մարմնի ղեկավարի սահմանած կարգով:

Հոդված 15. ~~14.~~ Բարձրագույն կրթության կրթական ծրագրերի լիցենզավորումը

1. Բարձրագույն կրթության բոլոր մակարդակների կրթական ծրագրերը ենթակա են պարտադիր լիցենզավորման:

2. Ինտեգրված ծրագրով ուսուցում իրականացնող բուհի կրթական ծրագրերը ենթակա են լիցենզավորման յուրաքանչյուր կրթական մակարդակի համար:

~~4. Ըստ բարձրագույն կրթության մակարդակների կրթական ծրագրերի լիցենզավորումն իրականացնում է լիազոր մարմինը կրթական ծրագրերի լիցենզավորման հանձնաժողովի որոշման հիման վրա՝ «Լիցենզավորման մասին» օրենքի, սույն օրենքի, բարձրագույն կրթության կրթական ծրագրերի լիցենզավորման կարգերի և այլ իրավական ակտերի դրույթներին համապատասխան:~~

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված լիցենզավորումն իրականացնում է համապատասխան լիազոր մարմինը՝ լիցենզավորման ստորաբաժանման եզրակացության և լիցենզավորման հանձնաժողովի որոշման հիման վրա՝ լիցենզավորման ոլորտը կարգավորող օրենքի, սույն օրենքի, բարձրագույն կրթության մակարդակների կրթական ծրագրերի լիցենզավորելու կարգի և այլ իրավական ակտերի դրույթներին համապատասխան:

4. ~~Յ.~~ Լիցենզիայի տրամադրման համար հիմք են՝

1) կրթական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ ուսումնական տարածքի առկայությունը, որի նկատմամբ բուհն ունի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված համապատասխան *սեփականության կամ օգտագործման* իրավունքներ,

2) ուսումնասիրտադրական պրակտիկայի մասնագիտական գործնական (աշխատանքային) ուսուցման և գիտահետազոտական աշխատանքների ապահովման և լաբորատոր բազայի, անհրաժեշտ գույքի, համապատասխան սարքավորումների գրադարանային-տեղեկատվական համակարգի առկայությունը և ուսումնամեթոդական ապահովումը,

3) համապատասխան կրթական մակարդակներում *կրթական ծրագրով* ուսուցում ապահովելու համար *առկա* ակադեմիական կազմի, գիտական աշխատողների և ուսումնաօժանդակ անձնակազմի ապահովումը,

4) բուհի հինգ տարվա ռազմավարական ծրագրի առկայությունը, *իսկ մասնավոր և պետության մասնակցությամբ բուհերի դեպքում՝ նաև բիզնես պլանի, դրա համար անհրաժեշտ ֆինանսավորման հիմնավոր աղբյուրների վերաբերյալ:*

5) ուսանողներին ֆինանսական աջակցություն տրամադրելու պարտավորությունը՝ *պետության մասնակցությամբ բուհերի* և մասնավոր բուհերի դեպքում:

5. Լիցենզավորման սույն հոդվածի 4-րդ կետով սահմանված հիմքերի չափանիշները և պարտադիր պայմաններն ու պահանջները սահմանվում են բարձրագույն կրթության *մակարդակների ծրագրերը՝ ըստ ոլորտային* կրթական ծրագրերի լիցենզավորման կարգերով, որոնք լիազոր մարմնի ներկայացմամբ հաստատում է Կառավարությունը:

6. Կրթական ծրագիրը գիտական կազմակերպության *կամ սոցիալական գործընկերության կողմ հանդիսացող կազմակերպության* հետ համատեղ իրականացնելու

դեպքում գիտական տվյալ կազմակերպությունը բուհին է տրամադրում է տեղեկություններ կրթական և գիտական նպատակով տրամադրվող իր ռեսուրսների վերաբերյալ, մարդկային և նյութական (գիտահետազոտական, մասնագիտական, նյութատեխնիկական) ռեսուրսները բուհին, որոնք համալրում են լիցենզավորման պարտադիր պայմանների և պահանջների հիմքերը:

~~7. Լիազոր մարմինը դադարեցնում է բուհին տրված համապատասխան լիցենզիայի գործողությունը՝~~

7. Սույն հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի հիման վրա բուհին տրված համապատասխան լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել և լիցենզիան ուժը կորցրած ճանաչվել կրթության պետական կառավարման լիազոր մարմնի որոշումով, եթե՝

1) բուհը լիցենզիան օրենքով չնախատեսված դեպքերում հանձնել է օգտագործման, գրավ է դրել կամ օտարել է,

2) բուհի դիմումի համաձայն,

2) բուհը այդ մասին սահմանված ձևաչափով դիմում է ներկայացրել,

3) լիցենզիա ստանալու համար ներկայացված փաստաթղթերում հայտնաբերվել է լիցենզիան տալու համար էական նշանակություն ունեցող կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվություն,

~~4) լիցենզավորված գործունեություն իրականացնող իրավաբանական անձի լուծարման կամ գործունեությունը դադարեցնելու դեպքերում:~~

4) Բուհը կամ օրենքով սահմանված հիմքերով կրթական ծրագիր իրականացնող իրավաբանական անձը լուծարվել կամ գործունեությունը դադարեցրել է, ինչպես նաև փոփոխվել է բուհի հետ համագործակցության կողմ հանդիսացող կազմակերպության այնպիսի պայմաններ, որոնք էականորեն ազդում կամ խաթարում է կրթական ծրագրի իրականացումը և բուհը փոխարինող կամ այլընտրանք չի առաջարկում,

5) սույն օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ և 10-րդ մասերով սահմանված ժամկետում բուհը չի դիմել ինստիտուցիոնալ հավատարմագրման կամ ծրագրային հավատարմագրումը երկու անգամ անընդմեջ մերժվել է:

~~9. Սահմանված ժամկետում ծրագրային հավատարմագրման չդիմելու կամ ծրագրային հավատարմագրումն երկու անգամ անընդմեջ մերժվելու դեպքում բուհի կրթական ծրագրի իրականացման լիցենզիայի գործողությունը դադարեցվում է, իսկ տվյալ կրթական ծրագրի մասով լիցենզիան ճանաչվում է ուժը կորցրած:~~

~~10. Համապատասխան լիցենզիայի գործողությունը դադարեցվում է լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու միջոցով լիազոր մարմնի որոշմամբ: Խմբագրվել է~~

11. Օրենսդրության պահանջների խախտման պատճառով լիցենզիայի գործողության դադարեցման մասին որոշումը կայացվում է խախտումը կատարվելու

օրվանից ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում, շարունակվող և տևող խախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից մեկ տարվա ընթացքում, իսկ սույն հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետով նախատեսված դեպքերում՝ կեղծ կամ ոչ հավաստի տեղեկատվությունը հայտնաբերելու օրվանից 15 օրվա ընթացքում:

12. Սույն հոդվածի 7-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հիմքով լիցենզիայի գործողության դադարեցման դեպքում նոր լիցենզիա ստանալու համար դիմումը ներկայացվում է լիցենզիայի գործողությունը դադարեցվելուց մեկ տարի հետո:

13. Սույն հոդվածի 7-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված հիմքերով լիցենզիայի գործողությունը համարվում է դադարեցված լիազոր մարմնի համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից, եթե այդ որոշմամբ ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ: Լիազոր մարմինը լիցենզիայի գործողության դադարեցման մասին պատշաճ ձևով տեղեկացնում է բուհին՝ ուղարկելով նաև լիցենզիայի գործողության դադարեցման մասին որոշման բնօրինակը:

14. Լիցենզիայի գործողության դադարեցման մասին լիազոր մարմնի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

15. Կրթական ծրագրի իրականացման լիցենզիայի գործողությունը դադարեցնելու դեպքում կրթական ծրագրում ընդգրկված ուսանողներն իրավունք ունեն շարունակելու ուսումնառությունը համապատասխան կրթական ոլորտում՝ ընդգրկվելով տվյալ կամ մեկ այլ ինստիտուցիոնալ հավատարմագրում ունեցող բուհի կրթական ծրագրերում կամ մասնակցելու այդ բուհի կրթական ծրագրերով ամփոփիչ ատեստավորմանը՝ լիազոր մարմնի ղեկավարի սահմանած կարգով:

~~16. Մասնավոր բուհերի լիցենզավորման հիմքերն են նաև՝~~

~~1) 4 տարվա բիզնես պլանի և դրա իրականացմանն ուղղված անհրաժեշտ ֆինանսավորման աղբյուրների առկայությունը,~~

~~2) ուսանողներին ֆինանսական աջակցություն տրամադրելու պարտավորությունը:~~

Հոդված 16. 15. Բարձրագույն կրթության որակի ապահովումը

1. Բարձրագույն կրթության որակի ապահովման սկզբունքներն են՝ թափանցիկությունը, հաշվետվողականությունը, պարբերականությունը, հուսալիությունը և օբյեկտիվությունը:

2. Բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգը ներառում է՝

1) բուհերի որակի ապահովման ներքին համակարգը,

2) բուհերի որակի ապահովման արտաքին համակարգը,

3) որակի արտաքին գնահատման կամ հավաստման կառույցները, ներառյալ՝ միջազգային:

3. Որակի արտաքին գնահատման կամ հավաստման կառույցները Կառավարության կողմից ստեղծված կամ Կառավարության սահմանված կարգով ձևաչված, իրենց գործառույթներում անկախ մարմիններ են, որոնց հիմնական նպատակը բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովման գործընթացների իրականացումն է:

4. Բարձրագույն կրթության որակի արտաքին գնահատման կամ հավաստման կառույցներին ներկայացվող պահանջներն են՝

1) իրենց գործունեության իրականացումն ապահովող հրապարակված քաղաքականության և ընթացակարգերի առկայությունը,

2) անկախ և ինքնավար գործելու երաշխիքները,

3) իրենց գործունեության պարբերական արտաքին գնահատում անցնելը,

4) բուհերի և դրանց կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման կամ հավաստման գործառույթների իրականացումը,

5) կառույցների կառավարմանը, գործառույթներին և գործունեության ուղղություններին օրենսդրությամբ ներկայացվող այլ պահանջները:

Հոդված 17. 16. Բուհի հավատարմագրումը

~~1. Բուհի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրումն իրականացվում է որակի գնահատման կամ հավաստման ազգային կամ միջազգային կառույցների կողմից՝ սույն օրենքի դրույթներին և Կառավարության սահմանած կարգին համապատասխան:~~

1. Բուհի ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրումն իրականացվում է որակի գնահատման կամ հավաստման ազգային ***կառույցները կամ միջազգային ցանցերը՝*** սույն հոդվածով և ***16-րդ հոդվածով սահմանված*** դրույթներին, Կառավարության սահմանած կարգին և միջպետական պայմանագրերի հիման վրա:

2. Ինստիտուցիոնալ հավատարմագրման արդյունքում գնահատվում է բուհի գործունեության արդյունավետությունը, խթանվում բուհի զարգացմանը և կրթական ծագրերի իրականացման գործընթացի բարելավումը:

3.—2. Նոր հիմնադրված բուհը ինստիտուցիոնալ հավատարմագրում է անցնում հիմնադրումից հետո առավելագույնը ***չորս յոթ*** տարվա ընթացքում:

~~4. 3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետում ինստիտուցիոնալ հավատարմագրում չանցնելու դեպքում բուհի գործունեությունը դադարեցվում է:~~

4. Բարձրագույն կրթության առաջինից երրորդ մակարդակների (այդ թվում՝ ինտեգրված ծրագրի) աստիճանաշնորհող նոր կրթական ծրագրերն իրականացման առաջին շրջափուլի ավարտից հետո ~~մեկ~~ ***երկու*** տարվա ընթացքում ենթակա են ծրագրային հավատարմագրման:

~~5. Սույն հոդվածի 4-րդ մասի պահանջները չպահպանելու դեպքում կրթական ծրագրի գործունեությունը դադարեցվում է:~~

5. ~~6.~~ Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրումն իրականացվում է ըստ առանձին բուհերի և դրանց կրթական ծրագրերի կամ տվյալ կրթական ոլորտում ներառված կրթական ծրագրերի խմբերի:

6. 7. Հավատարմագրումն իրականացվում է ըստ առանձին բուհերի, ներառելով տվյալ բուհի կրթական ծրագրերի առնվազն 10%-ը կամ տվյալ կրթական ոլորտում ներառված կրթական ծրագրերի խմբի:

7. Բուհի մասնաձյուղը ինստիտուցիոնալ հավատարմագրում է անցնում ընդհանուր հիմունքներով՝ մասնաձյուղ ունեցող բուհի հայտի հիման վրա՝ մասնաձյուղն ստեղծած բուհի կազմում, և տրվում է առանձին հավատարմագիր մայր բուհին:

8. **Ինստիտուցիոնալ հավատարմագրումը նախապայման է ծրագրային հավատարմագրման համար:** Ծրագրային հավատարմագրման համար կարող է դիմել միայն ինստիտուցիոնալ հավատարմագրում ստացած բուհը կամ բուհի մասնաձյուղը:

11. ~~9.~~ Բուհի տրամադրած դիպլոմի հավելվածում պարտադիր նշվում է բուհի, դրա առանձին կրթական ծրագրի հավատարմագրված լինելու (առկայության դեպքում) հանգամանքը:

12. Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման կարգերը, պահանջները և չափանիշները, ինչպես նաև հավատարմագրի գործողության ժամկետը լիազոր մարմնի ներկայացմամբ հաստատում է Կառավարությունը:

13. Ինստիտուցիոնալ հավատարմագրում ստացած բուհերը և դրանց ծրագրային հավատարմագրում ունեցող կրթական ծրագրերը գրանցվում են պետության կողմից ձանաչված, հավատարմագրում իրականացնող կառույցների, հավատարմագրված բուհերի և կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություններ պարունակող հավատարմագրման պետական գրանցամատյանում, որը վարում է Կառավարության կողմից ստեղծված հավատարմագրման կառույցը:

14. ~~12.~~ Հայաստանի Հանրապետությունում գործող օտարերկրյա պետությունների բուհերը կամ բուհերի մասնաձյուղերը, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա այլ պետությունների, ինչպես նաև՝ բուհերի կամ կազմակերպությունների մասնակցությամբ ստեղծված բուհերը ենթակա են հավատարմագրման սույն օրենքի դրույթներին և Կառավարության սահմանած կարգին համապատասխան:

Հոդված 18. ~~17.~~ Բուհ ընդունելությունը

1. Հայաստանի Հանրապետությունում գործող բուհեր ընդունելությունն իրականացվում է հասանելիության, հրապարակայնության, արդարության,

վստահելիության, թափանցիկության, հավասարության սկզբունքների կիրառմամբ՝ մրցութային հիմունքներով՝ ըստ բարձրագույն կրթության մակարդակների և դրանց կրթական ծրագրերի:

2. Բուհերի ընդունելության հիմնական սկզբունքները, նախապայմանները, մրցույթի չափանիշները սահմանում է Կառավարությունի, իսկ ներքին ընթացակարգեր, այդ թվում՝ բողոքարկման, սահմանում է բուհը:

3. 2- Բարձրագույն կրթության տվյալ մակարդակի համար բուհն իրավունք ունի ընդունելություն հայտարարելու միայն համապատասխան կրթական ծրագրի լիցենզիայի առկայության դեպքում: Բուհը պարտավոր է իր կայքում հրապարակել ընդունելությանն ու ուսումնառությանն առնչվող իր ներքին կանոնակարգերը, ինչպես նաև լիցենզիայի, ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման մասին տեղեկությունները:

4. 3- Ընդունելությունն առաջին մակարդակի և ինտեգրված ծրագրի կրթական ծրագրերով կատարվում է միջնակարգ կամ դրան համարժեք կրթության հենքով անձի գիտելիքների և կարողությունների, իսկ արվեստի և սպորտի ոլորտներում՝ նաև նրանց համապատասխանաբար ստեղծագործական կամ ֆիզիկական ընդունակությունների, ստուգման արդյունքների հիման վրա:

5. 4- Ընդունելություն իրականացնող բուհերը համապատասխան ուսումնական տարվանից ոչ ուշ, քան երկու տարի առաջ, հրապարակում են ըստ կրթական ծրագրերի և դրանց ընդունելության համար անհրաժեշտ մուտքային պահանջ հանդիսացող հանրակրթական համապատասխան առարկաների արտաքին գնահատման վկայագրերի ցանկը: Հրապարակված ցանկում փոփոխություններ և լրացումներ կատարելն արգելվում է, բացառությամբ այն դեպքերի, երբ փոփոխությունների և լրացումների կատարման, ինչպես նաև նոր ցանկի հաստատման անհրաժեշտությունը պայմանավորված է հայտարարված արտակարգ կամ ռազմական դրությամբ:

6. 5- Հայաստանի Հանրապետությունում գործող ցանկացած բուհ կամ բուհի մասնաճյուղ բարձրագույն կրթության առաջին մակարդակի և ինտեգրված ծրագրի կրթական ծրագրերով ընդունելության դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող անձանց համար «Հայոց լեզու» առարկայից արտաքին գնահատման վկայագիրը պարտադիր է:

7. 6- Բուհի կողմից կազմակերպվող ընդունելության մրցույթին կարող են մասնակցել այն անձինք, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն հաջողությամբ անցել են պետության լիազորած մասնագիտացված կազմակերպության կողմից համապատասխան հանրակրթական ծրագրերի հենքի վրա կազմակերպած գիտելիքների ստուգումը, իսկ արվեստի և սպորտի ոլորտների կրթական ծրագրերի դեպքում՝ հաջողությամբ անցել են բուհի կողմից նրանց

համապատասխանաբար ստեղծագործական կամ ֆիզիկական ընդունակությունների ստուգումը:

8. 7. Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, որոնք առնվազն վերջին 3 տարին սովորել և ավարտել են օտարերկրյա պետությունների հանրակրթական, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, կարող են բուհ ընդունվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամ օտարերկրյա քաղաքացիների համար Կառավարության սահմանած կարգով՝ իրենց ընտրությամբ:

9. 8. Բարձրագույն կրթության առաջին մակարդակի և ինտեգրված ծրագրի կրթական ծրագրերով ընդունելության կարգը, ներառյալ՝ ընդհանուր պահանջները, մրցույթի անցկացման ընդհանուր չափանիշները և մրցութային միավորի ձևավորման սկզբունքները, վկայագրի ձևը և դրա գործողության ժամկետը, ինչպես նաև բնակչության առանձին խմբերի (այդ թվում՝ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց) ընդունելության առանձնահատկությունները սահմանում է Կառավարությունը: Դրանց հիման վրա բուհը հաստատում ու հրապարակում է մրցույթի կարգը և չափանիշները:

10. 9. Այն անձինք, որոնք ունեն առնվազն առաջին մակարդակին համարժեք կրթություն, իրավունք ունեն մրցութային հիմունքներով՝ նախորդ ուսումնառության միջին որակական գնահատականների հաշվառմամբ և բուհի կողմից սահմանված ընդունելության մուտքային պահանջները բավարարելու դեպքում, ընդունվելու և ուսումնառելու տվյալ կամ մեկ այլ բուհի երկրորդ մակարդակի կրթական ծրագրով:

11. 10. Բարձրագույն կրթության երկրորդ և երրորդ մակարդակների ընդունելության կարգերը հաստատում է բուհի ակադեմիական խորհուրդը:

12. 11. Այն անձինք, որոնք ունեն առնվազն երկրորդ մակարդակին համարժեք կրթություն, իսկ բժշկական ուղղվածությամբ կրթական ծրագրերի դեպքում՝ բժշկի, կլինիկական ուղղվածությամբ բժշկական կրթական ծրագրերի դեպքում՝ բժիշկ-մասնագետի որակավորում, իրավունք ունեն մրցութային հիմունքներով՝ նախորդ ուսումնառության միջին որակական գնահատականների հաշվառմամբ և ընդունելության լրացուցիչ պայմաններին բավարարելու դեպքում, ընդունվելու և ուսումնառելու բարձրագույն կրթության երրորդ մակարդակում:

13. 12. Այն դիմորդները, որոնք ընդունելության մրցույթի արդյունքներով սահմանված կարգին համապատասխան հավակնում են պետական ուսումնառության կրթաթոշակով սովորելու մեկ կամ մի քանի կրթական ծրագրերով կամ տարբեր բուհերի նույն ոլորտի կրթական ծրագրով, մինչև համապատասխան կրթական մակարդակի ընդունելության համար սահմանված վերջնաժամկետը պետք է ընտրեն մեկ բուհ (կրթական ծրագիր), որում ցանկանում են ստանալ բարձրագույն կրթություն:

14. 43. Բուհն ուսանողի հետ կնքում է պայմանագիր, որի տեքստը նախօրոք հրապարակվում է բուհի ընդունելության հայտարարության հետ միաժամանակ:

15. 44. Բուհի և ուսանողի միջև կնքված պայմանագրում պարտադիր ամրագրվում են ուսումնառության առավելագույն տևողությունը և բարձրագույն կրթության տվյալ կրթական ծրագրի համար նախատեսված ուսումնառության վարձի տարեկան չափը և կրեդիտների ընդհանուր քանակը, ինչպես նաև սույն օրենքով և այլ օրենքներով ու բուհի կանոնադրությամբ սահմանված այլ պայմաններ:

16. 45. Ուսանողի հետ կնքված պայմանագրի պայմանները, ներառյալ՝ այդ պայմանագրով նախատեսված ուսումնառության վարձի չափը, ուսումնառության ամբողջ ընթացքում փոփոխման ենթակա չէ: Վերականգնված ուսանողի ուսումնառության վարձի չափը սահմանվում է տվյալ ուսումնական տարվա համար սահմանված վարձի չափով և նրա հետ կնքվում է նոր պայմանագիր:

17. 46. Պարտադիր ժամկետային գինվորական ծառայության զորակոչվելու, առողջական վիճակի պատճառով, ինչպես նաև՝ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի նպատակով արձակուրդից վերադարձած ուսանողի կարգավիճակը վերականգնելիս պահպանվում է բուհ ընդունվելու պահին սահմանված ուսումնառության վարձի չափը (բացառությամբ, տվյալ ուսումնական տարում ուսումնառության վարձի նվազման դեպքի), որը ենթակա չէ փոփոխման ամբողջ ուսումնառության ընթացքում, եթե ուսանողն իր կարգավիճակը վերականգնելու վերաբերյալ դիմումը ներկայացրել է ուսումնառության ընդհատման պատճառը վերանալու օրվանից հետո ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում:

18. 47. Կառավարությունն եռամյա ժամանակահատվածի համար հաստատում է ըստ ակադեմիական բնագավառների և կրթական ոլորտների (ներառյալ կլինիկական ռեզիդենտուրայի) նախատեսվող պետական ուսումնառության կրթաթոշակների տոկոսային համամասնությունը՝ հաջորդ երեք ուսումնական տարիների կտրվածքով, ելնելով երկրի տնտեսական, սոցիալական, առողջապահական, մշակութային զարգացման կարիքներից և համապատասխան ուղղվածությամբ մասնագետների պատրաստման անհրաժեշտությունից ու պետության ֆինանսական հնարավորություններից:

19. 48. Կառավարության կողմից տվյալ տարվա համար ըստ ակադեմիական բնագավառների և կրթական ոլորտների համապատասխան համամասնությամբ հաստատված բյուջետային հատկացումների շրջանակներում՝ կրթության և գիտության ոլորտի լիազոր մարմնի ղեկավարը մինչև տվյալ տարվա մարտի 1-ը՝ լիազոր մարմնի կողմից սահմանված կարգի համաձայն հաստատում է բարձրագույն կրթության առաջին մակարդակում՝ ըստ կրթական ծրագրերի, իսկ երկրորդ և երրորդ մակարդակներում՝ ըստ

բուհերի և կրթական ոլորտների (ենթաօլորտների) պետության կողմից տրամադրվող ուսումնառության կրթաթոշակների նախնական քանակը, իսկ վերջնականը՝ մրցույթի արդյունքների հիման վրա:

20. 19. Կառավարության կողմից տվյալ տարվա համար ըստ կլինիկական ռեզիտենտուրայի համապատասխան համամասնության հաստատված բյուջետային հատկացումների շրջանակներում՝ առողջապահության ոլորտի լիազոր մարմնի ղեկավարը մինչև տվյալ տարվա մարտի 1-ը՝ առողջապահության ոլորտի լիազոր մարմնի կողմից սահմանված կարգի համաձայն՝ հաստատում է պետության կողմից տրամադրվող ուսումնառության վարձի լրիվ փոխհատուցմամբ տեղերի թիվը՝ ըստ կլինիկական ռեզիդենտուրայի մասնագիտական ուղղությունների (ըստ՝ մասնագիտությունների, նեղ մասնագիտությունների):

21. ~~20.~~ Բուհը մինչև տվյալ տարվա մարտի 10-ը՝ իր պաշտոնական կայքում հրապարակում է տվյալ ուսումնական տարվա ըստ կրթական մակարդակների և կրթական ծրագրերի լիցենզիայով նախատեսված ընդունելության տեղերի առավելագույն թիվը:

Հոդված 19. ~~18.~~ Կազմակերպությունները և միավորումները բուհում ու գիտական կազմակերպությունում

1. Բուհերում և գիտական կազմակերպություններում արգելվում է քաղաքական, կուսակցական, ~~հասարակական~~, կրոնական կազմակերպությունների և միավորումների գործունեությունը, ~~բացառությամբ արհեստակցական, մասնագիտական, մշակութային, մարզական, ուսանողական և շրջանավարտների կազմակերպությունների ու միությունների:~~

ԳԼՈՒԽ 3

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 20. ~~19.~~ Բարձրագույն կրթության և գիտության համակարգում Կառավարության լիազորությունները

1. Բարձրագույն կրթության և գիտության համակարգում Կառավարությունը՝

1) ստեղծում, վերակազմակերպում ու լուծարում է հանրային բուհը և հանրային գիտական կազմակերպությունը,

2) որոշում է հանրային, պետական մասնակցությամբ և մասնավոր բուհերի հիմնադրման և գործունեություն առանձնահատկությունները,

2) հաստատում է ըստ բարձրագույն կրթության ակադեմիական բնագավառների՝ կրթական ոլորտները և որակավորման դասիչները,

3) հաստատում է ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման կարգն ու չափանիշները, ինչպես նաև պետության կողմից ճանաչված որակի արտաքին գնահատման կամ հավաստման կառույցներին ներկայացվող պահանջները և չափանիշները,

4) հաստատում է կրթական ծրագրերի լիցենզավորման կարգերը՝ ըստ բարձրագույն կրթության մակարդակների,

5) հաստատում է բուհ ընդունելության (բարձրագույն կրթության առաջին մակարդակի և ինտեգրված ծրագրի) ~~կարգը~~ **սկզբունքները, չափանիշները և շրջանակը,**

6) հաստատում է որակավորումների ազգային շրջանակի և դրա մակարդակների (որակավորումների) ընդհանրական նկարագրիչները,

7) սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները և մեթոդաբանությունը,

8) հաստատում է պետության կողմից ուսանողներին տրամադրվող ուսումնառության կրթաթոշակների (այդ թվում՝ միջպետական պայմանագրերով օտարերկրյա քաղաքացիներին) և ուսումնառության նպաստների, ինչպես նաև ուսանողական ֆինանսական խրախուսման տրամադրման կարգը, պահանջները, չափանիշները և սոցիալական խմբերը,

9) **հիմնադրում է** Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա (**այսուհետև՝ ակադեմիա**) և հաստատում **ակադեմիայի** կանոնադրությունը, **ակադեմիայի** ակադեմիկոսների ու թղթակից անդամների ընտրության չափանիշները,

10) հաստատում է բարձրագույն կրթության համակարգի պետական քաղաքականությունը և համակարգի զարգացմանն ուղղված բարեփոխումների ծրագրերը,

11) հաստատում է Հայաստանի Հանրապետությունում գիտության ոլորտի զարգացման գերակա ուղղությունները և ռազմավարական ծրագրերը,

12) հաստատում է բուհեր և գիտական կազմակերպությունների տարատեսակները,

13) հաստատում է կլինիկական ռեզիդենտուրայի ընդունելությանը և ամփոփիչ ատեստավորմանը ներկայացվող պահանջները, կազմակերպման չափանիշները և առանձնահատկությունները, ինչպես նաև մասնագիտական ուղղություններին ներկայացվող պահանջները՝ վերջնարդյունքները,

14) կլինիկական ռեզիդենտուրայի մասնագիտական ուղղությունների (ըստ մասնագիտությունների, նեղ մասնագիտությունների) ցանկը և դրանց տևողությունները,

15) հաստատում է բարձրագույն կրթության առաջինից երրորդ մակարդակներով շնորհվող որակավորումները, ինչպես նաև կլինիկական ռեզիդենտի որակավորումը, հավաստող դիպլոմների (այդ թվում՝ համատեղ դիպլոմի) և հավելվածի ձևերը,

16) սահմանում է ինստիտուցիոնալ հավատարմագրի գործողության ժամկետը,

17) հաստատում է ըստ ակադեմիական բնագավառների և կրթական ոլորտների (ներառյալ կլինիկական ռեզիդենտուրայի) նախատեսվող պետական կրթաթոշակների տոկոսային համամասնությունը՝ հաջորդ երեք ուսումնական տարիների համար,

18) իրականացնում է սույն օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 21. 20. Բարձրագույն կրթության և գիտության համակարգում լիազոր մարմնի լիազորությունները

1. Բարձրագույն կրթության և գիտության համակարգում լիազոր մարմինը՝

1) մշակում է բարձրագույն կրթության և գիտության համակարգի պետական քաղաքականությունը և համակարգի զարգացմանն ուղղված բարեփոխումների ծրագրերը, վերահսկում դրանց իրականացումը,

2) իրականացնում է բարձրագույն կրթության համակարգի մշտադիտարկում և գնահատում,

3) իրականացնում է լիցենզավորված կրթական ծրագրերի մշտադիտարկում՝ սահմանված չափանիշներին համապատասխան,

4) սահմանում է բարձրագույն կրթության կազմակերպման հենքային պահանջները,

5) հաստատում է ըստ բարձրագույն կրթության կրթական ոլորտների՝ կրթական ծրագրերի (այդ թվում՝ ինտեգրված ծրագրով) ցանկը,

6) հաստատում է բարձրագույն կրթության որակավորումների ոլորտային շրջանակները,

7) հաստատում է բուհերում ուսանողների տեղափոխության կարգը,

8) հաստատում է գիտական աստիճանի շնորհման և զրկման, ինչպես նաև դիպլոմի տրամադրման կարգը, պահանջներն ու չափանիշները,

9) բուհերի ուսումնական գործընթացի կազմակերպմանն աջակցելու նպատակով մշակում և հաստատում է խորհրդատվական բնույթի մեթոդաբանություններ, ուղեցույցներ, օրինակելի կարգեր, այդ թվում՝ ակադեմիական բարեվարքության օրինակելի կանոնակարգը,

10) հաստատում է բուհի գործունեության կատարողականի արդյունքային ցուցանիշները,

11) հաստատում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ծրագրերի և միջոցառումների իրականացման և ֆինանսավորման կարգերը, ֆինանսավորման գործակիցները, չափանիշները և նորմատիվները,

12) հաստատում է բարձրագույն կրթության և գիտության կառավարման տեղեկատվական ընդհանուր համակարգի վարման կարգը,

13) հաստատում է բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակում ներառված որակավորումների պետական գրանցամատյանի վարման կարգը,

14) հաստատում է բուհի և գիտական կազմակերպության կառավարման խորհրդի ձևավորման կարգը և ժամկետները, կառավարման խորհրդում լիազոր մարմնի ղեկավարի կողմից առաջադրվող անդամության թեկնածուներին ներկայացվող ընդհանուր պահանջները,

15) հաստատում է հավատարմագրման վկայականի ձևը,

16) հաստատում է գիտական կազմակերպություններում գիտական կադրերի որակավորման կարգը և չափանիշները,

17) կազմակերպում է պետական բյուջետային ֆինանսավորման գործընթացը,

18) աջակցում է գիտական արդյունքի առևտրայնացմանը և գործնական կիրառություններին, նորարարական գործունեության իրականացմանը,

19) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 22. ~~21~~. Բարձրագույն կրթության և գիտության համակարգում գիտության կոմիտեի լիազորությունները

1. Բարձրագույն կրթության և գիտության համակարգում գիտության կոմիտեն՝

1) մասնակցում է գիտության բնագավառում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության մշակմանը,

2) մշակում և համապատասխան ոլորտի լիազոր մարմնին է ներկայացնում գիտության, այդ թվում՝ գիտական և գիտատեխնիկական փորձաքննության, բնագավառի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի նախագծեր,

3) մշակում և ***լիազոր մարմնին է ներայացնում*** գիտության ոլորտի ***արդյունավետ կառավարման, այդ թվում՝*** կառուցվածքային բարեփոխումների ***վերաբերյալ հիմնավոր առաջարկներ***, կազմակերպում դրանց իրականացումը,

3) մշակում է գիտության զարգացման հեռանկարային ու նպատակային, ինչպես նաև միջպետական համագործակցության շրջանակներում գիտատեխնիկական ծրագրեր և կազմակերպում դրանց իրականացումը,

4) մշակում և իրականացնում է գիտական և գիտատեխնիկական ներուժի զարգացման ապահովմանն ու օգտագործման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրեր, գիտական կադրերի պատրաստման նպատակով իրականացնում է ուսումնասիրություններ և ներկայացնում առաջարկություններ,

5) մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների հայ գիտնականների ներուժի համախմբմանն ուղղված ծրագրեր,

6) մշակում է գիտության ոլորտի ենթակառուցվածքի և նյութատեխնիկական բազայի արդիականացմանը միտված, ինչպես նաև գիտական արդյունքի առևտրայնացման, տնտեսական շրջանառության մեջ ընդգրկմանու նորարարական գործունեության աջակցության ծրագրեր, հաստատում է ծրագրերի հրավերների փաթեթները,

7) կազմակերպում է գիտական դրամաշնորհային մրցույթներ և սահմանված կարգով հաստատում դրանց արդյունքները,

8) սահմանում է փորձաքննության կազմակերպիչներին և փորձագետներին առաջադրվող պահանջները,

9) մշակում և հաստատում է պետական փորձաքննության մեթոդական և կազմակերպատեխնիկական հիմքերը,

10) կնքում է փորձաքննության բնագավառում միջազգային համագործակցության պայմանագրեր,

11) մշակում և հաստատում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող և գիտության ոլորտում իրականացվող ծրագրերի մշտադիտարկման և արդյունավետության գնահատման մեթոդաբանությունը և կազմակերպում դրանց իրականացումը,

12) մշակում և հաստատում է գիտության ոլորտի պետական բյուջետային ֆինանսավորման հայտերի, պայմանագրերի, համաձայնագրերի և հաշվետվությունների ձևերը,

13) հաստատում է մրցանակների տրամադրման կարգը և տրամադրում է մրցանակներ գիտահետազոտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող սուբյեկտներին,

14) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնում է համապատասխան վարչական, վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթերի, տեղեկանքների և այլն) ներդրում և դրանց միջոցով հավաքված տվյալների ու տեղեկությունների հիման վրա՝ սահմանված կարգով վարչական վիճակագրական ռեգիստրների վարում,

15) կազմակերպում է ռազմատեխնիկական և *իր լիազորության շրջանակում այլ* ծրագրերի մշակումը և փորձաքննությունը, մասնակցում է դրանց իրականացման

մոնիտորինգի (մշտադիտարկման) կազմակերպմանը՝ համապատասխան պետական կառավարման մարմինների հետ,

16) իրականացնում է գիտահետազոտական կամ գիտատեխնիկական արդյունքների վերաբերյալ տվյալների հավաքում, գիտաչափական վերլուծություն, հաշվառման ամբողջական համակարգի ձևավորում և վարում,

17) իր իրավասության սահմաններում իրականացնում է գիտության ոլորտի պետական բյուջետային գործընթացը,

18) իրականացնում է գիտական միջոցառումների կազմակերպման համար ֆինանսական աջակցության ծրագրեր, հաստատում է հրավերների փաթեթները և ֆինանսավորման երաշխավորված միջոցառումների ցանկը,

~~19) ստեղծում է խորհրդակցական մարմիններ, մասնագիտական փորձագիտական խորհուրդներ, մրցութային հանձնաժողովներ կամ աշխատանքային խմբեր և հաստատում դրանց կազմը, սահմանվել է 2 մասով՝ որպես գործառույթ ապահովելու միջոց,~~

19) մշակում և համապատասխան լիազոր մարմին է ներկայացնում բուհի և գիտական կազմակերպությունների ակադեմիական պաշտոնների, այդ թվում՝ պրոֆեսորի և գիտական աշխատողներին ներկայացվող հիմնական չափանիշները,

20) ապահովում է գիտական աստիճան շնորհող մասնագիտական խորհուրդների ստեղծումը և դրանց աշխատանքների կազմակերպումը,

21) ապահովում է գիտական աստիճանի շնորհման պահանջների և չափանիշների մշակումը,

22) հաստատում է ատենախոսությունների հիմնական դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկը՝ սահմանելով այդ ցանկում ընդգրկվելու չափանիշները,

23) հաստատում և համապատասխան փաստաթղթով ամրագրում է գիտական աստիճանը՝ հիմք ընդունելով մասնագիտական խորհուրդների որոշումները և որակավորման գործի ուսումնասիրությունը,

24) սահմանում է գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող ատենախոսության պաշտպանությանն անհրաժեշտ տպագիր գիտական աշխատությունների վերաբերյալ նվազագույն պահանջները,,

25) իրականացնում է գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող ատենախոսությունների և տպագիր աշխատանքների փորձաքննություն՝ այլ հեղինակներից և աղբյուրներից հնարավոր փոխառված դրույթների ու նյութերի առկայությունը կամ դրանց բացակայությունը պարզելու նպատակով,

26) սահմանում է գիտական աստիճան շնորհող մասնագիտական խորհրդի անդամին ներկայացվող պահանջները,

27) հաստատում է գիտական աստիճան շնորհող մասնագիտական խորհուրդների անդամների բարեվարքության կանոնակարգը,

28) համապատասխան ոլորտի լիազոր մարմնի ղեկավարին ներկայացնում է եզրակացություն օտարերկրյա պետություններում ստացված գիտական աստիճանը հավաստող փաստաթուղթը (դիպլոմ, վկայագիր) Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանի դիպլոմին համապատասխանեցնելու մասին,

29) իր իրավասության սահմաններում համագործակցում է օտարերկրյա պետությունների համապատասխան մարմինների հետ,

30) կազմակերպում է ատենախոսությունների և սեղմագրերի պահպանումը,

31) կազմակերպում է տեղեկագրերի հրատարակումը,

32) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

2. Սույն հոդվածով 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 11-րդ և 15-յդ կետերով սահմանված գործառույթները ապահովելու նպատակով բարձրագույն կրթության և գիտության համակարգում գիտության կոմիտեն ստեղծում է մասնագիտական փորձագիտական խորհուրդներ, մրցութային հանձնաժողովներ, աշխատանքային խմբեր, ինչպես նաև կարող է ձևավորել մասնագիտական և խորհրդակցական, հաստատել դրանց կազմը:

ԳԼՈՒԽ 4

ԲՈՒՀԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ, ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ, ԲՈՒՀԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 23. ~~22~~. Բուհի և գիտական կազմակերպության հիմնադրումը (ստեղծումը), վերակազմակերպումը և լուծարումը

1. Բուհը և գիտական կազմակերպությունը ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Բուհը և գիտական կազմակերպությունը ստեղծվում է հիմնադրի որոշմամբ:

3. Բուհը և գիտական կազմակերպությունը ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

Հոդված 24. ~~23~~. Բուհի կառավարումը և կառավարման մարմինները

1. Բուհի կառավարման մարմիններն են՝

1) կառավարման խորհուրդը (հոգաբարձուների խորհուրդ),

2) ակադեմիական խորհուրդը (գիտական խորհուրդ),

3) կառավարման գործադիր մարմինը՝ ռեկտորը (տնօրեն, պետ):

2. Բուհի կառավարումն իրականացվում է սույն օրենքով, տվյալ կազմակերպական-իրավական ձևի իրավաբանական անձի գործունեությունը կարգավորող օրենքով, իր կանոնադրությունով այլ օրենքներով և իրավական ակտերով և բուհի կանոնադրությամբ:

~~3. Բուհի կանոնադրությունը պետք է պարունակի իր մասնաճյուղերի և կառուցվածքային միավորների կառավարման ու ֆինանսական ինքնուրույնությունն ապահովող դրույթներ:~~

Հոդված 25. 24. Գիտական կազմակերպության կառավարումը և կառավարման մարմինները

1. Գիտական կազմակերպության կառավարման մարմիններն են՝

- 1) կառավարման խորհուրդը (հոգաբարձուների խորհուրդ),
- 2) կառավարման գործադիր մարմինը՝ տնօրենը:

2. Գիտական կազմակերպության գիտահետազոտական և գիտատեխնիկական գործունեությունը համակարգում է գիտական խորհուրդը:

3. Գիտական կազմակերպության կառավարման խորհուրդը գործում է 5 տարի ժամկետով, որի կազմը սահմանված կարգով և ժամկետներում հաստատում է համապատասխան լիազոր մարմինը՝ կառավարման խորհրդի ձևավորման պահանջների բավարարման դեպքում:

4. Գիտական կազմակերպության կառավարման խորհուրդը բաղկացած է 8 անդամից:

5. Գիտական կազմակերպության կառավարման խորհուրդը ձևավորվում է հետևյալ համամասնությամբ՝

1) 4-ին առաջադրում է կազմակերպության գիտական խորհուրդը՝ կազմակերպության ներկայացուցիչներից,

2) 2-ին առաջադրում է համապատասխան ոլորտի լիազոր մարմնի ղեկավարը՝ կազմակերպության գիտական գործունեության ուղղության կամ հարակից ուղղության բուհի և մշակույթի, տնտեսության կամ այլ ոլորտների ներկայացուցիչներից,

3) 1-ին առաջադրում է համապատասխան ոլորտի լիազոր մարմնի ղեկավարը՝ լիազոր մարմնի ներկայացուցիչներից,

4) 1-ին առաջադրում է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան՝ կազմակերպության գիտական գործունեության ուղղության կամ հարակից ուղղության ներկայացուցիչներից:

6. Կառավարման խորհրդի անդամ չի կարող լինել այն անձը, որը՝

1) դատապարտվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ,

2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

3) որևէ կուսակցության ղեկավար մարմնի անդամ է,

4) զբաղեցնում է քաղաքական պաշտոն,

5) տվյալ գիտական կազմակերպությունում զբաղեցնում է ղեկավար պաշտոն,

6) տվյալ գիտական կազմակերպության գիտական խորհրդի անդամ է:

7. Կառավարման խորհրդի նախագահին իրենց կազմից ընտրում են խորհրդի անդամները: Նույն անձը չի կարող երկու անգամ անընդմեջ ընտրվել տվյալ գիտական կազմակերպության կառավարման խորհրդի նախագահ:

8. Գիտական կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է կառավարման գործադիր մարմինը՝ տնօրենը:

9. Գիտական կազմակերպության տնօրենի պաշտոնում կարող է ընտրվել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որն ունի կազմակերպության գիտական գործունեության ուղղությամբ գիտական աստիճան և բարձրագույն կրթության կամ գիտության ոլորտի առնվազն 10 տարվա աշխատանքային, որից առնվազն 3 տարվա ղեկավար աշխատանքի փորձ:

10. Գիտական կազմակերպության տնօրենի պաշտոնում ընտրված անձի լիազորությունները դադարեցվում են իրավասու մարմնի որոշմամբ, եթե լրացել է նրա 65 տարին:

11. Գիտական կազմակերպության տնօրեն ընտրվում է սույն օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված բաց մրցույթի կարգով՝ կազմակերպության կառավարման խորհրդում, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նույն կազմակերպությունում ընտրվել տնօրենի պաշտոնում:

~~12. Կառավարման խորհրդի կողմից սույն օրենքով և գիտական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով երկու անգամ անընդմեջ տնօրեն չընտրելու դեպքում կառավարման խորհրդի գործունեությունը համարվում է դադարած:~~

12. 13. Գիտական կազմակերպության կառավարման խորհրդի կողմից տնօրենի ներկայացված բյուջեի նախագիծը կամ գիտական կազմակերպության գործունեության տարեկան հաշվետվությունն երկու անգամ անընդմեջ չընդունվելու դեպքում տնօրենի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվում է:

13. 14. Գիտական կազմակերպության կառավարման կարգը, կառավարման խորհրդի աշխատակարգը, գիտական խորհրդի անդամների թվաքանակը, ձևավորման կարգը և աշխատակարգը սահմանվում է կազմակերպության կանոնադրությամբ:

14. ~~15.~~ Հանրային գիտական կազմակերպության կանոնադրությունը հաստատվում, դրանում փոփոխություններ և լրացումներ կատարվում են օրենսդրությամբ սահմանված կարգով:

15. ~~16.~~ Նոր ստեղծվող կամ վերակազմավորման, բաժանման, միաձուլման ձևով վերակազմակերպվող գիտական կազմակերպությունում մինչև կառավարման խորհրդի ձևավորումը համապատասխան ոլորտի լիազոր մարմնի ղեկավարը նշանակում է տնօրենի պաշտոնակատար մեկ տարուց ոչ ավելի ժամկետով, բացառությամբ սույն օրենքի 39-րդ հոդվածի 13-րդ մասով նախատեսված դեպքերի:

Հոդված 26. ~~25.~~ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան

1. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա) Հայաստանի Հանրապետության հիմնադրած՝ ինքնակառավարվող ոչ առևտրային կազմակերպություն է, որը միավորում է ակադեմիական գիտական տիտղոսներ ունեցող և Հայաստանի կամ օտարերկրյա ճանաչված գիտնականներին:

Ակադեմիայի հիմնական գործառույթը գիտության զարգացման և գիտահետազոտական գործունեության արդյունքների ներդրման, ինչպես նաև հանրապետության տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման ուղղությամբ համապատասխան ոլորտի պետական քաղաքականություն մշակող և իրականացնող մարմիններին Ակադեմիայի կանոնադրությամբ սահմանված կարգով խորհրդատվության տրամադրումն է:

2. Ակադեմիան կարող է ստեղծել գիտական կազմակերպությունների համագործակցային ցանցեր՝ գիտատեխնիկական կամ նորարարական խնդիրների համատեղ լուծմանն աջակցելու նպատակով:

3. Ակադեմիայի կազմակերպական-իրավական ձևի, կառավարման և գործունեության առանձնահատկությունները սահմանվում են Ակադեմիայի կանոնադրությամբ, որը հաստատում է Կառավարությունը:

4. Ակադեմիան շնորհում է ակադեմիական գիտական տիտղոսները՝ Ակադեմիայի ակադեմիկոս (Ակադեմիայի իսկական անդամ), Ակադեմիայի թղթակից անդամ, Ակադեմիայի պատվավոր անդամ, Ակադեմիայի արտասահմանյան անդամ, Ակադեմիայի պատվավոր դոկտորի աստիճան: Ակադեմիայի ակադեմիական գիտական տիտղոսները շնորհվում են ցմահ:

5. Ակադեմիայի գիտական տիտղոսները ամրագրվում են վկայականներով: Ակադեմիայի գիտական տիտղոսների շնորհումն իրականացվում է Ակադեմիայի

կանոնադրության համաձայն անցկացվող ընտրությունների արդյունքներով: Ակադեմիայի ակադեմիկոսներին և թղթակից անդամներին տրամադրվում է ցմահ պատվովձար, որի չափը սահմանում է Կառավարությունը: Պատվովձարը տրամադրվում է Ակադեմիայի այն անդամներին, որոնք ապրում և աշխատում են Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետություն ծառայողական գործուղման են մեկնել մինչև երեք ամիս ժամկետով:

6. Ակադեմիայի ակադեմիկոսների, թղթակից անդամների, պատվավոր, օտարերկրյա անդամների և պատվավոր դոկտորների ընտրությունների կարգը, նրանց իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Ակադեմիայի կանոնադրությամբ:

7. Ակադեմիայի իսկական և թղթակից անդամների առավելագույն թիվը և մասնագիտությունները սահմանում է Կառավարությունը:

Հոդված 27-26. Բուհի կառավարման խորհրդի ձևավորումը

~~1. Բուհի կառավարման խորհուրդը գործում է 5 տարի ժամկետով, որի կազմը սահմանված կարգով և ժամկետներում հաստատում է համապատասխան լիազոր մարմնի ղեկավարը՝ կառավարման խորհրդի ձևավորման պահանջների բավարարման դեպքում:~~

1. Հանրային բուհի կառավարման խորհուրդը մշտապես գործող մարմին է, որի յուրաքանչյուր անդամ գործում է 5 տարի ժամկետով, եթե սույն օրենքով կամ կանոնադրությամբ սահմանված հիմքերով տվյալ անդամի լիազորությունները ավելի վաղ չի դադարեցվել: Խորհրդի անվանական կազմը հաստատում է համապատասխան լիազոր մարմնի ղեկավարը՝ կառավարման խորհրդի ձևավորման պահանջների բավարար հիմքերի առկայության դեպքում:

2. Հանրային բուհի կառավարման խորհուրդը բաղկացած է 9-12 անդամից:

3. Կառավարման խորհուրդը ձևավորվում է հետևյալ համամասնությամբ՝

1) 1 ը՝ ուսանողության ներկայացուցիչներից, որին առաջադրում է բուհի ուսանողական խորհուրդը;

2) 4 ը՝ բուհի հիմնական ակադեմիական կազմից, որոնց առաջադրում է բուհի ակադեմիական խորհուրդը;

3) 1 ը՝ բուհի հետ համագործակցող կազմակերպություններից, որոնց ներկայացուցչին առաջադրում է բուհի ակադեմիական խորհուրդը, ելնելով բուհի առանձնահատկություններից և ոլորտային ուղղվածությունից;

~~4) 6 ին՝ համապատասխան ոլորտի լիազոր մարմնի ղեկավարը՝ գործարարներից, կրթության, գիտության, մշակույթի կամ տնտեսության այլ ոլորտների ներկայացուցիչներից:~~

3. Հանրային բուհի կառավարման խորհուրդը ձևավորվում է հետևյալ համամասնությամբ՝

1) չորսը՝ բուհի ակադեմիական խորհրդի առաջադրմամբ բուհի հետ համագործակցող կազմակերպությունների, գիտամանկավարժական անձնակազմի և ուսանողության ներկայացուցիչներից, որոնց ներկայացվող պահանջները և առաջադրման կարգը սահմանվում է սույն հոդվածի 4-րդ մասով և բուհի կանոնադրությամբ,

2) հինգը՝ համապատասխան լիազոր մարմնի ղեկավարը՝ գործարարների, կրթության, գիտության, մշակույթի կամ գործատուների (բուհի մասնագիտությունների ոլորտը սպասարկող ոլորտների) ներկայացուցիչներից:

4. Հանրային բուհը կառավարման խորհրդի իր անդամի թեկնածուներին ներկայացվող պահանջները և առաջադրման, փոխարինման և լիազորությունները դադարեցնելու ընթացակարգը սահմանում է բուհի ակադեմիական խորհուրդը:

~~4. Ակադեմիական խորհուրդը կառավարման խորհրդի անդամ ընտրում է բուհի հետ համագործակցող այն կազմակերպություններից, որոնք առնվազն 5 տարի իրականացնում են գործունեություն համապատասխան ոլորտում: Բուհի հետ համագործակցող կազմակերպությունների ցանկը իրապարակվում է բուհի կայքում:~~

5. Հանրային բուհի խորհրդի գործող անդամի լիազորությունների ժամկետի ավարտից առնվազն մեկ ամիս առաջ, իսկ խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարելու դեպքում՝ դադարման օրվանից հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում, խորհրդի նախագահը այդ մասին տեղյակ է պահում բուհի ակադեմիական խորհրդին և համապատասխան լիազոր մարմնի ղեկավարին:

6. Կառավարման խորհրդի անդամի թափուր տեղի համալրումը կատարվում է առաջարկությունը ստանալու օրվան հաջորդող 5 օրյա ժամկետում:

~~5. Կառավարման խորհրդի անդամ նշանակելու մասին առաջարկությունը խորհրդի անդամ նշանակելու իրավունք ունեցող համապատասխան մարմնին է ներկայացվում խորհրդի գործող կազմի լիազորությունների ժամկետի ավարտից առնվազն մեկ ամիս առաջ, իսկ խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարելու դեպքում՝ դադարման օրվանից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:~~

~~6. Կառավարման խորհրդի նոր կազմը հաստատվում է համապատասխան ոլորտի լիազոր մարմնի կողմից՝ մինչև խորհրդի գործող կազմի լիազորությունների ժամկետի ավարտը, իսկ խորհրդի գործունեության կամ խորհրդի անդամի լիազորությունները~~

~~վաղաժամկետ դադարելու դեպքում՝ դադարման պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում:~~

~~7. Կառավարման խորհրդի նոր կազմն իր լիազորությունները ստանձնում է խորհրդի գործող կազմի լիազորությունների ժամկետի ավարտման օրը, իսկ խորհրդի անդամի լիազորությունները՝ վաղաժամկետ դադարելու դեպքում՝ խորհրդի նոր անդամի սահմանված ժամկետում նշանակման օրը: Խորհրդի նոր անդամի լիազորություններն ավարտվում են խորհրդի լիազորությունների ժամկետի ավարտի հետ միաժամանակ:~~

Հոդված 28. 27. Բուհի կառավարման խորհրդի նախագահը և անդամները

1. Կառավարման խորհրդի անդամները գործունեությունն իրականացնում են հասարակական հիմունքներով:

2. Կառավարման խորհրդի անդամներն իրավունք ունեն փոխհատուցում ստանալու այն ծախսերի դիմաց, որոնք կապված են կառավարման խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Հատուցվող ծախսերի չափը և փոխհատուցման կարգը սահմանում է Կառավարման խորհուրդը:

3. Կառավարման խորհրդի նախագահին իրենց կազմից ընտրում են խորհրդի անդամները՝ նիստին ներկա անդամների պարզ մեծամասնությամբ:

4. Կառավարման խորհրդի նախագահ կարող է լինել միայն բուհի հետ համագործակցող կազմակերպությունից կամ լիազոր մարմնի ղեկավարի կողմից նշանակված անդամը:

5. Կառավարման խորհրդի նախագահը՝

1) կազմակերպում է խորհրդի աշխատանքները,

2) գումարում է խորհրդի նիստերը և նախագահում է դրանք,

3) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,

4) իրականացնում է բուհի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

6. Միևնույն անձը չի կարող երկու անգամ անընդմեջ ընտրվել տվյալ բուհի կառավարման խորհրդի նախագահ:

7. Կառավարման խորհրդի անդամ չի կարող լինել այն անձը, որը՝

1) դատապարտվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ,

2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

3) որևէ կուսակցության ղեկավար մարմնի անդամ է,

4) զբաղեցնում է քաղաքական պաշտոն,

5) տվյալ բուհում զբաղեցնում է վարչական պաշտոն,

6) տվյալ բուհի ակադեմիական խորհրդի անդամ է:

Հոդված 28. Հանրային բուհի կառավարման խորհրդի անդամի լիազորությունների դադարեցումը և դադարումը

1. Հանրային բուհի կառավարման խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են՝

1) կառավարման խորհրդի անդամի պաշտոնի հետ անհամատեղելի պաշտոն զբաղեցնելու դեպքում,

2) որևէ կուսակցության ղեկավար մարմնի անդամ դառնալու դեպքում,

3) տվյալ բուհի ակադեմիական խորհրդի անդամ դառնալու դեպքում,

4) տարվա ընթացքում կառավարման խորհրդի նիստերին անհարգելի պատճառով առնվազն երկու անգամ չմասնակցելու դեպքում,

5) նրան նշանակած կամ ընտրած մարմնի կողմից նրան կառավարման խորհրդի անդամի պաշտոնից վաղաժամկետ ազատելու դեպքում,

6) նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում,

7) նրա դիմումի համաձայն:

2. Կառավարման խորհրդի անդամի լիազորությունները դադարում են՝

1) նրա մահվան դեպքում,

2) նրան անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու դեպքում,

3) լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում:

3. Կառավարման խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումը կայացնում է խորհուրդը:

4. Կառավարման խորհրդի անդամի լիազորությունները դադարում են համապատասխան հիմքը առաջանալու օրը, որի մասին հայտարարությունը հրապարակվում է բուհի կայքում:

~~5. Կառավարման խորհրդի կողմից սույն օրենքով և բուհի կանոնադրությամբ սահմանված կարգով երկու անգամ անընդմեջ ռեկտոր չընտրելու դեպքում կառավարման խորհրդի գործունեությունը համարվում է դադարած:~~

Հոդված 30. 29. Հանրային բուհի կառավարման խորհրդի լիազորությունները

1. Հանրային բուհի կառավարման խորհուրդը՝

1) հաստատում է իր աշխատակարգը,

2) ընտրում է բուհի կառավարման խորհրդի նախագահին և խորհրդի քարտուղարին,

3) ~~մշակում և հաստատում է ռեկտորի ընտրության կանոնակարգը, կազմակերպում է ռեկտորի ընտրությունը, ընտրում է ռեկտորին, կայացնում է ռեկտորի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշում,~~

3) հաստատում է ռեկտորի ընտրության կանոնակարգը,

4) կազմակերպում է ռեկտորի թեկնածուի ընտրանքային գործընթացը, ընտրում և համապատասխան լիազոր մարմնի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում ռեկտորի մինչև երեք թեկնածու,

5) օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում՝ որոշում է ռեկտորին անվստահություն հայտնելու և լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին առաջարկությամբ դիմել համապատասխան լիազոր մարմնի ղեկավարին,

6) 4) քննարկում և սահմանված կարգով որոշում է կայացնում ռեկտորի կողմից ներկայացված բուհի զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու մասին,

7) 5) քննարկում և սահմանված կարգով որոշում է կայացնում ռեկտորի կողմից ներկայացված՝ բուհի գործունեության տարեկան ծրագիրը, բուհի տարեկան բյուջեն ու դրա փոփոխությունները հաստատելու մասին,

8) 6) ռեկտորի ներկայացմամբ քննարկում է բուհի գործունեության տարեկան ծրագրի, բուհի տարեկան բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունները, օրենսդրությամբ պահանջվող այլ ֆինանսական հաշվետվությունները և սահմանված կարգով որոշում է կայացնում դրանց վերաբերյալ,

9) 7) ռեկտորի ներկայացրած բյուջեի նախագիծը կամ բյուջեի կատարման հաշվետվությունն երկու անգամ անընդմեջ չհաստատելու դեպքում՝ քննարկում և քվեարկում է ռեկտորին անվստահություն հայտնելու հարցը,

10) 8) ռեկտորի ներկայացված բուհի գործունեության և զարգացման ծրագրի կատարման տարեկան հաշվետվությունը կառավարման խորհրդի կողմից երկու անգամ անընդմեջ չընդունվելու դեպքում՝ քննարկում և քվեարկում է ռեկտորին անվստահություն հայտնելու հարցը,

11) 9) քննարկում և հավանություն է տալիս ռեկտորի առաջարկությանը՝ բուհի կանոնադրությամբ սահմանված խոշոր գործարքների վերաբերյալ, որոնց գումարային նվազագույն արժեքը սահմանում է խորհուրդը,

12) 10) քննարկում և սահմանված կարգով որոշում է կայացնում տնտեսական ընկերություններ ստեղծելու կամ դրանցում մասնակցելու, ինչպես նաև մասնաձյուղեր և հիմնարկներ ստեղծելու ու դրանց կանոնադրությունները հաստատելու մասին,

13) 40) քննարկում և սահմանված կարգով որոշում է կայացնում կառուցվածքային միավորներ ստեղծելու, վերակազմակերպելու և լուծարելու մասին,

14) 41) հաստատում է ֆինանսական աուդիտ իրականացնող անձի ընտրությունը,

15) 42) փոփոխություններ է կատարում բուհի կանոնադրության մեջ, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,

16) 43) որոշում է կայացնում կառավարման խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին՝ **սույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերով,**

17) 44) կասեցնում կամ անվավեր է ճանաչում ռեկտորի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և բուհի կանոնադրությանը հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և հանձնարարականները,

18) 45) վերահսկում է իր որոշումների կատարման ընթացքը,

19) 46) քննարկում և սահմանված կարգով որոշում է կայացնում բուհի կառուցվածքը հաստատելու մասին,

20) 47) քննարկում և սահմանված կարգով որոշում է կայացնում բուհի հաստիքացուցակը հաստատելու մասին,

21) 48) քննարկում և սահմանված կարգով հաստատում է ըստ կրթական ծրագրերի **կազմակերպման ծառայության արժեքը** (ուսումնառության վարձերի չափերը),

22) 49) իրականացնում է օրենքով, բուհի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

2. **Հանրային բուհի** կառավարման խորհրդի նախագահի և անդամների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են բուհի կանոնադրությամբ:

3. ~~Կառավարման խորհուրդը կարող է ունենալ ուլորտային հանձնաժողովներ, որոնց ստեղծման և գործունեության կարգը սահմանում է կառավարման խորհուրդը:~~

3. **Հանրային բուհի զարգացման ռազմավարական ուղղություններ սահմանելու, ուլորտային կրթական ծրագրեր ներդնելու, համագործակցության շրջանակը ընդլայնելու, համագործակցության պայմանագրեր կնքելու, բուհի ֆինանսատնտեսական գործունեությունը և ծախսային ուղղությունները սահմանելու և այլ կառավարչական որոշումները հիմնավորված կայացնելու նպատակով,** կառավարման խորհուրդը կարող է **ստեղծել** ուլորտային հանձնաժողովներ, որոնց **ձևավորման** և գործունեության կարգը սահմանում է կառավարման խորհուրդը: **Ուլորտային հանձնաժողովների որոշումները կրում են խորհրդատվական բնույթ:**

Հոդված 31. 30-Բուհի ակադեմիական խորհուրդը

1. Ակադեմիական խորհուրդը բուհի ուսումնամեթոդական, գիտահետազոտական և գիտատեխնիկական գործունեության կառավարման մարմինն է:

2. Ակադեմիական խորհուրդը ձևավորվում և գործում է 5 տարի ժամկետով, սույն օրենքին և բուհի կանոնադրությանը համապատասխան:

3. Ակադեմիական խորհրդի անդամների թիվը սահմանվում է բուհի կանոնադրությամբ:

4. Ակադեմիական խորհրդի կազմում ի պաշտոնե մտնում են ռեկտորը, որը ակադեմիական խորհրդի նախագահն է, պրոռեկտորները, մասնաճյուղերի ղեկավարները, բուհի համապատասխան կառուցվածքային միավորների ղեկավարներ, ակադեմիական կազմի ներկայացուցիչներ, ինչպես նաև ուսանողական համակազմի ներկայացուցիչներ (կազմում են ակադեմիական խորհրդի անդամների ընդհանուր թվի 25%-ը) ու ընտրովի այլ անդամներ՝ բուհի կանոնադրությանը համապատասխան:

5. Բուհի ակադեմիական խորհուրդը՝

1) հաստատում է իր աշխատակարգը,

2) քննարկում է բուհում կրթության և գիտության զարգացման խնդիրները, մասնավորապես՝ ուսումնական գործընթացին, գիտական հետազոտությունների հիմնական ուղղություններին ու ծրագրերին, գիտական կարգերի պատրաստմանը, միջազգային գիտակրթական համագործակցությանը վերաբերող հարցերը և ընդունում դրանց վերաբերյալ որոշումներ,

3) ներկայացնում է առաջարկություններ կառավարման խորհրդին կառուցվածքային միավորներ ստեղծելու, վերակազմակերպելու և լուծարելու մասին ու հաստատում դրանց կանոնադրությունները,

4) ներկայացնում է առաջարկություններ բուհի կառուցվածքի և հաստիքացուցակի մասին,

5) քննարկում և սահմանված կարգով հաստատում է կրթական ծրագրերը (այդ թվում կլինիկական ռեզիդենտուրայի),

6) քննարկում է ուսումնական և գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները,

7) քննարկում և սահմանված կարգով հաստատում է հետազոտական և գիտամեթոդական աշխատանքների արդյունքների մասին հաշվետվությունները,

8) ընդունում է որոշում նոր կրթական ծրագրեր ստեղծելու և իրականացնելու մասին,

9) ընդունում է պատվավոր կոչումներ շնորհելու և մրցանակներ տալու մասին որոշումներ,

10) քննարկում և հաստատում է բուհի դեկանների, ամբիոնների վարիչների ու ակադեմիական կազմի ընտրության կանոնակարգերը,

11) քննարկում և հաստատում է բուհի ներքին կարգապահական կանոնները,
12) քննարկում և հաստատում է ակադեմիական բարեվարքության կանոնակարգը,
13) քննարկում և հաստատում է բուհի ուսանողների, ակադեմիական և վարչական կազմի ակադեմիական շարժունության կարգը,

14) քննարկում և հաստատում է բուհի կանոնադրությամբ նախատեսված ու բուհի գիտակրթական գործունեությունը և ուսումնական գործընթացի կազմակերպումը (այդ թվում՝ լրիվ կամ մասնակի բեռնվածությամբ ուսումնառության) կանոնակարգող ներքին կանոնակարգեր, կարգեր, ընթացակարգեր, ուղեցույցներ և այլ փաստաթղթեր,

15) քննարկում և հաստատում է բուհի կողմից ուսանողներին տրամադրվող ուսումնառության կրթաթոշակների (այդ թվում՝ միջբուհական պայմանագրերով օտարերկրյա քաղաքացիներին) ու ուսումնառության նպաստների տրամադրման, ինչպես նաև ուսանողական ֆինանսական խրախուսման կարգը, պահանջները և չափանիշները,

16) իրականացնում է բուհի կանոնադրությունից բխող ուսումնական, մեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ լիազորություններ:

6. Ակադեմիական խորհուրդը կարող է ունենալ մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ, որոնց ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է ակադեմիական խորհրդի որոշմամբ:

Հոդված 32. ~~31.~~ Հանրային բուհի ռեկտորը

1. ***Հանրային*** բուհի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է կառավարման գործադիր մարմինը՝ ռեկտորը:

2. ***Հանրային*** բուհի ռեկտորի (այդ թվում՝ մասնաճյուղի տնօրենի) պաշտոնում կարող է ընտրվել ***և նշանակվել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին՝ այն անձը***, որն ունի գիտական աստիճան և՝

1) բուհում դասավանդման և վարչական աշխատանքի առնվազն 5 ***10*** տարվա աշխատանքային փորձ կամ,

2) գիտական և ղեկավար աշխատանքի առնվազն 5 ***7*** տարվա աշխատանքային փորձ կամ,

3) բարձրագույն կրթության կամ գիտության համակարգի ղեկավար աշխատանքի առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ,

4) ղեկավար աշխատանքի առնվազն 5 և բուհում դասավանդման առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ:

3. Բուհի ռեկտորի (մասնաճյուղի տնօրենի) պաշտոնում ընտրված ***(նշանակված)*** անձի լիազորությունները դադարեցվում են, եթե լրացել է նրա 65 տարին ***կամ հրաժարվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից:***

4. Սույն օրենքի 29-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետի հիմքերով՝ խորհուրդը իր հիմնավոր որոշումով կարող է անվստահություն հայտնել ռեկտորին և առաջարկել համապատասխան լիազոր մարմնի ղեկավարին՝ վաղաժամկետ դադարեցնել տնօրենի հետ կնքված պայմանագրի գործողությունը:

~~4. Բուհի ռեկտորն ընտրվում է բաց մրցույթի կարգով՝ բուհի կառավարման խորհրդում, գաղտնի քվեարկությամբ, 5 տարի ժամկետով: Մասնաճյուղի տնօրենը ընտրվում է բուհի կանոնադրությամբ սահմանված կարգով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նույն բուհում ընտրվել ռեկտորի կամ մասնաճյուղի տնօրենի պաշտոնում:~~

5. Հանրային բուհի ռեկտորն ընտրվում է կառավարման խորհրդի կողմից՝ ընտրանքային կարգով: Ընտրանքային փուլին մասնակցած և փակ գաղտնի քվեարկության արդյունքում մրցույթը հաղթահարած մինչև երեք թեկնածու կարող են խորհրդի որոշումով առաջարկվել համապատասխան լիազոր մարմնի ղեկավարի հաստատմանը: Նշանակված ռեկտորի հետ լիազոր մարմնի ղեկավարը 5 տարի ժամկետով կնքում է սահմանված նմուշի պայմանագիր:

6. Հանրային բուհի մասնաճյուղի տնօրենին նշանակում է տվյալ բուհի ռեկտորը՝ 5 տարի ժամկետով:

~~7. Բուհի ռեկտորը (մասնաճյուղի տնօրենը) իր պաշտոնավարման ընթացքում չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ հիմնադիր, կուսակցությունում պաշտոն զբաղեցնել, կուսակցության անունից ունենալ ելույթներ, դրսևորել քաղաքական գաղափարներ և չեզոքություն: Կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ, ինչպես նաև հրապարակային ելույթներում և ցանկացած այլ հանգամանքում պարտավոր է դրսևորել քաղաքական գաղափարներ և չեզոքություն:~~

~~6. Բուհի ռեկտորի հետ աշխատանքային պայմանագիրը ստորագրում է կառավարման խորհրդի նախագահը, իսկ մասնաճյուղի տնօրենի հետ՝ բուհի ռեկտորը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:~~

*8. 7. Ռեկտորի լիազորությունների ժամկետի ավարտից ոչ շուտ, քան երեք **վեց** և ոչ ուշ, քան ~~երկու~~ երեք ամիս առաջ հայտարարվում է ռեկտորի ընտրություն: Նոր ռեկտորը ստանձնում է իր պարտականությունների կատարումը բուհի գործող ռեկտորի լիազորությունների ժամկետի ավարտի կամ մինչ այդ մեկ այլ հիմքով հաստիքը թափուր մնալու հաջորդող օրը:*

9. 8. Ռեկտորի թափուր հաստիք առաջանալու դեպքում կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ համապատասխան հիմքը առաջանալու օրվանից ոչ ուշ, քան ~~մեկամսյա ժամկետում~~: տասը աշխատանքային օրվա ընթացքում: Ռեկտորի թափուր հաստիք առաջանալու դեպքում մինչև սույն օրենքով և բուհի կանոնադրությամբ

սահմանված կարգով ռեկտորի ընտրությունը՝ ռեկտորի պարտականությունների կատարումը բուհի կառավարման խորհրդի որոշմամբ դրվում է պրոռեկտորներից մեկ վրա:

10. ~~Գ~~ Ռեկտորը՝

1) բուհի կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է բուհի գույքը (այդ թվում՝ ֆինանսական միջոցները) և կնքում գործարքներ բուհի անունից,

2) ներկայացնում է բուհը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

3) բուհի անունից հանդես է գալիս առանց լիազորագրի և տալիս է բուհի անունից հանդես գալու լիազորագրեր,

4) ձևավորում է ռեկտորին կից խորհրդատվական մարմիններ, սահմանում դրանց կազմն ու լիազորությունները,

5) ակադեմիական խորհրդի հաստատմանն է ներկայացնում բուհի կառուցվածքային միավորների կանոնադրությունները (այդ թվում՝ օրինակելի),

6) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում բուհի աշխատողներին,

7) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է հանձնարարականներ և վերահսկում դրանց կատարումը,

8) աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսանքի և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

9) կառավարման խորհրդի հաստատմանն է ներկայացնում բուհի հաստիքացուցակը և կառուցվածքը,

10) ապահովում է բուհի բնականոն գործունեությունը,

11) ապահովում է բուհի գույքի և ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարումը,

12) կառավարման խորհրդի կողմից հաստատվելուց հետո, մինչև ընթացիկ տարվա ~~ապրիլի~~ **մայիսի** 1-ը բուհի կայքում հրապարակում է բուհի նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունը,

13) մինչև հաշվետու տարվան հաջորդող հուլիսի 1-ը, բուհի կայքում հրապարակում է տարեկան աուդիտի եզրակացությունը,

14) ապահովում է բուհի ֆինանսական հաշվետվողականության պահանջների կատարումը,

15) ակադեմիական խորհրդին է ներկայացնում բուհի գործունեության մասին տարեկան հաշվետվությունը,

16) կառավարման խորհրդի հաստատմանն է ներկայացնում բուհի ռազմավարական ծրագիրը,

17) լիազոր մարմնի ղեկավարի հաստատմանն է ներկայացնում նոր կրթական ծրագրեր ստեղծելու և իրականացնելու մասին առաջարկությունները,

18) իրականացնում է սույն օրենքով, բուհի կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով նախատեսված այլ գործառույթներ:

11. 40. Բուհի պրոռեկտորները (մասնաճյուղի տնօրենի տեղակալները) նշանակվում են ռեկտորի (մասնաճյուղի տնօրենի) կողմից և ռեկտորը նրանց հետ կնքում է աշխատանքային պայմանագիր՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

12. 41. Ռեկտոր (մասնաճյուղի տնօրեն) չի կարող ընտրվել *կամ նշանակվել* այն անձը, որը՝

1) հանդիսանում է որևէ կուսակցության ղեկավար մարմնի անդամ կամ զբաղեցնում է քաղաքական պաշտոն,

2) դատապարտվել է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ,

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

~~12. Բուհի գործունեության մասին ռեկտորի կողմից ներկայացված տարեկան հաշվետվությունը կառավարման խորհրդի կողմից երկու անգամ անընդմեջ չընդունվելու դեպքում ռեկտորի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվում է: Ստեղծվում է 29-րդ հոդվածի 8-րդ կետ~~

13. Նոր ստեղծվող կամ վերակազմավորման, բաժանման, միաձուլման ձևով վերակազմակերպվող բուհում մինչև կառավարման խորհրդի ձևավորումը՝ համապատասխան ոլորտի լիազոր մարմնի ղեկավարը *մինչև* մեկ տարի ~~ուց ոչ ավելի~~ ժամկետով նշանակում է ռեկտորի պաշտոնակատար՝ *որը համապատասխանում է սույն օրենքով ռեկտորին ներկայացվող պահանջներին:* ~~բացառությամբ սույն օրենքի 39-րդ հոդվածի 13-րդ մասով նախատեսված դեպքերի:~~

ԳԼՈՒԽ 5

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 33. 32. Բարձրագույն կրթության և գիտության համակարգի ֆինանսավորումը

1. Բարձրագույն կրթության և գիտության համակարգի ֆինանսավորման աղբյուրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ստացված ֆինանսավորումը,

2) այլ աղբյուրներից ստացված դրամաշնորհները,

- 3) վճարովի ուսուցման ծառայություններից ստացված եկամուտները,
- 4) ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,
- 5) վարկային միջոցները,
- 6) գիտական արդյունքի ներդրումից և իրացումից գոյացած միջոցները,
- 7) ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները,
- 8) այլ պետություններից ստացված ֆինանսավորումը,
- 9) օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացված միջոցները:

2. Բուհերը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից կարող են ֆինանսավորվել հետևյալ ձևերով՝

1) ինստիտուցիոնալ ֆինանսավորում, որը հատկացվում է հանրային բուհերին ենթակառուցվածքների զարգացման, ինչպես նաև կրթության որակի բարելավման նպատակով, և կախված չէ բուհին տրամադրվող պետական ուսումնառության կրթաթոշակների թվից: Ինստիտուցիոնալ ֆինանսավորման բաղկացուցիչ են նաև բուհի գործունեության կատարողականի արդյունքային ցուցանիշները,

2) ուսումնառության կրթաթոշակների տրամադրում՝ կրթաթոշակի ձևով ուսումնառության վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում բուհ ընդունելության արդյունքների կամ ուսումնառության ընթացքում ցուցաբերած առաջադիմության հիմքով այն ուսանողներին, որոնք բավարարում են կրթաթոշակի ստացման սահմանված պահանջներին և չափանիշներին կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նպատակային ուսումնառության համար կնքել են համապատասխան պայմանագիր,

3) ուսումնառության նպաստների տրամադրում՝ նպաստի ձևով ուսումնառության վարձի փոխհատուցում սոցիալապես խոցելի կամ այլ առանձին խմբերի այն ուսանողներին, որոնք բավարարում են նպաստի ստացման սահմանված պահանջներին և չափանիշներին,

4) ուսանողական ֆինանսական խրախուսում՝ ուսուցման հետ կապված այլ ծախսերի կամ ակադեմիական և հետազոտական ձեռքբերումների համար լավագույն ուսանողների ֆինանսական աջակցություն, որոնք բավարարում են ֆինանսական խրախուսման սահմանված պահանջներին և չափանիշներին,

5) մրցակցային ֆինանսավորում, որը տրամադրվում է բուհի զարգացմանն ուղղված նորարարական-նպատակային ծրագրերի ֆինանսավորման համար՝ մրցութային հիմունքներով,

6) նպատակային ֆինանսավորում՝ պետության կողմից կոնկրետ միջոցառումների իրականացման համար տրամադրվող ֆինանսավորում:

3. Գիտահետազոտական գործունեության պետական բյուջետային ֆինանսավորման ձևերն են բազային, գիտական նպատակային և գիտական դրամաշնորհային՝

1) բազային ֆինանսավորումը հատկացվում է հանրային բուհերին և հանրային գիտական կազմակերպություններին՝ հետազոտական աշխատանքների իրականացման, գիտահետազոտական գործունեության ենթակառուցվածքի զարգացման, ազգային արժեք ներկայացնող գիտական ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման և գիտության կազմակերպման նպատակով,

2) գիտական նպատակային ֆինանսավորումն իրականացվում է մրցութային հիմունքներով և հատկացվում է գիտական կազմակերպություններին՝ գիտության և տեխնոլոգիաների զարգացման գերակա ուղղություններին համապատասխանող համալիր ծրագրերի իրականացման նպատակով,

3) գիտական դրամաշնորհային ֆինանսավորումն իրականացվում է մրցութային հիմունքներով և հատկացվում է գիտական աշխատողներին ու գիտահետազոտական խմբերին՝ դրանց նախաձեռնությամբ ներկայացված հետազոտական ծրագրերի իրականացման նպատակով:

4. Պետական բյուջեից ուսումնառության կրթաթոշակ կարող է տրամադրվել միայն հավատարմագրված կրթական ծրագրերի շրջանակներում բարձրագույն կրթություն ստացող ուսանողների կրթության ֆինանսավորման համար:

5. Գիտահետազոտական և գիտատեխնիկական գործունեության նպատակով պետական բյուջեից ֆինանսավորումն իրականացվում է գիտական և գիտատեխնիկական փորձաքննության հիման վրա: Գիտահետազոտական և գիտատեխնիկական գործունեության պետական բյուջետային ֆինանսավորման ժամկետների համար սահմանվում են 2-5 տարի բազային և նպատակային ծրագրերի ու 1-5 տարի՝ գիտական դրամաշնորհների իրականացման համար:

6. Հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների համար հատկացումները նախատեսվում են Կառավարության կողմից հաստատված ծրագրերի հիման վրա: Հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների ծրագրի համար ֆինանսավորում նախատեսվում է ծրագրի ամբողջ ժամանակահատվածի համար ու ծրագրով նախատեսված միջանկյալ արդյունքների ապահովման դեպքում չի կարող ընդհատվել հաջորդ բյուջետային տարիներին:

7. Գիտության առանձին բնագավառներում հետազոտությունների իրականացման համար դրամաշնորհային միջոցները մրցութային կարգով տրամադրվում են՝

- 1) բուհին կամ գիտական կազմակերպությանը,
- 2) բուհի ակադեմիական կազմի կամ գիտական կազմակերպության գիտական աշխատողների առանձին ներկայացուցիչներին,
- 3) բուհի ակադեմիական կազմի կամ գիտական կազմակերպության ներկայացուցիչներից կազմված խմբերին:

8. Բուհը կամ գիտական կազմակերպությունը պարտավոր է ապահովել սույն հոդվածի 7-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված սուբյեկտների կողմից իրականացվող հետազոտական աշխատանքների ֆինանսաբանկային և հաշվապահական սպասարկումը:

9. Պետական ֆինանսավորում ստացող բուհը և գիտական կազմակերպությունը պարտավոր են Կառավարության սահմանած կարգով յուրաքանչյուր տարի լիազոր մարմնին ներկայացնել հաշվետվություն՝ տրամադրված միջոցների ծախսման վերաբերյալ:

***Հոդված 34. 33. Բուհի և գիտական կազմակերպության գործունեության
նյութատեխնիկական հիմքերը***

1. Հայաստանի Հանրապետության հանրային բուհի և հանրային գիտական կազմակերպության հիմնադիրը (հիմնադիրները) կանոնադրությամբ նախատեսված գործունեության ապահովման նպատակով բուհին սեփականության կամ անժամկետ օգտագործման (անհատույց) իրավունքով կարող է տրամադրել շենքեր, շինություններ, տրանսպորտ, հողամասեր, սարքավորումներ, ինչպես նաև սպառողական, սոցիալական, մշակութային և այլ նշանակության անհրաժեշտ գույք:

2. Բուհին և գիտական կազմակերպությանն անժամկետ օգտագործման (անհատույց) իրավունքով տրված գույքը չի կարող լինել գրավի առարկա, ինչպես նաև չի կարող փոխանցվել կամ հանձնվել այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց որպես սեփականություն, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

3. Բուհը և գիտական կազմակերպությունը սեփականության իրավունք ունի ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից բուհին նվիրատվության կամ կտակի ձևով փոխանցված դրամական միջոցների, գույքի և սեփականության այլ օբյեկտների, բուհի և գիտական կազմակերպության գործունեության արդյունք համարվող մտավոր ու ստեղծագործական աշխատանքի արդյունքների, օրենքով չարգելված այլ աղբյուրների, ինչպես նաև սեփական գործունեությունից ստացված եկամուտների և այդ եկամուտների հաշվին ձեռք բերված գույքի նկատմամբ:

4. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները բուհերին և գիտական կազմակերպություններին կարող են անհատույց կամ հատուցելի կարգով օգտագործման հանձնել ուսումնական տարածքներ և հողամասեր ու այլ գույք:

5. Հանրային բուհերը և հանրային գիտական կազմակերպությունները հաշվետու տարվա գործունեության արդյունքներով շահույթ ձևավորելու դեպքում զուտ շահույթի առնվազն 5 տոկոսի չափով ձևավորում են պահուստային ֆոնդ՝ ապագա ռիսկերի առաջացման և այլ ֆորս-մաժորային իրավիճակներում օգտագործելու համար: Պահուստային ֆոնդի օգտագործման կարգը սահմանում է բուհի կառավարման խորհուրդը:

6. Կառավարման խորհրդի որոշմամբ հանրային բուհի կամ հանրային գիտական կազմակերպության պահուստային ֆոնդի գումարները կարող են ներդրվել պետական պարտատոմսերում կամ առևտրային բանկերում որպես ավանդ: Ներդրումներից ստացված եկամուտը բուհը կարող է օգտագործել իր ռազմավարական զարգացման ծրագրի իրականացման համար:

7. Հանրային բուհը և հանրային գիտական կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված տարածքները հանձնել վարձակալության կրթական, հրատարակչական, գիտահետազոտական և գիտատեխնիկական գործունեություն ծավալող, ինչպես նաև բուհին կամ գիտական կազմակերպությանը ծառայություններ մատուցող կազմակերպություններին: Ամրացված տարածքները վարձակալության հանձնելու արդյունքում ստացված վճարները բուհի սեփականությունն են:

Հոդված 35. 34. Ուսանողների ուսումնառության վարձը, ուսումնառության կրթաթոշակի կամ ուսումնառության նպաստի ձևով փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող ուսանողները

1. Բուհերը կրթական ծառայություններ մատուցելու համար կարող են սահմանել ըստ կրթական ծրագրերի ուսումնառության վարձերը և որոշել դրանց չափերը:

2. Բուհերը կարող են նաև հաստատության կողմից սահմանված կարգով լրացուցիչ ծառայությունների մատուցման համար գանձել ծառայության վճարներ, որոնց սահմանման անհրաժեշտությունը և չափը հաստատում է տվյալ բուհի կառավարման խորհուրդը՝ ռեկտորի ներկայացմամբ:

3. Արգելվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ուսումնառությունը կազմակերպելու նպատակով անհրաժեշտ ծառայությունների մատուցման համար գանձել հավելյալ վճարներ:

4. Կրթական ծրագրերի օտար լեզվով ուսուցման կազմակերպման դեպքում, բուհի կողմից կարող է սահմանվել ուսումնառության վարձի ավելի բարձր չափ, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

5. Արգելվում է բուհերի վճարովի ուսուցմամբ ուսումնառող՝ Արցախի Հանրապետության և Վրաստանի Սամցխե-Ջավախք ու Քվեմո-Քարթլի նահանգներում գրանցված և բնակվող հայազգի, Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև ծագումով հայ այն օտարերկրյա քաղաքացիների համար, որոնց մշտական բնակության օտարերկրյա պետությունում ստեղծվել է նրանց կյանքին կամ առողջությանը սպառնացող արտակարգ իրավիճակ, կիրառել ուսումնառության վարձի ավելի բարձր չափ, քան սահմանված է տվյալ բուհում սովորող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար: Սույն մասում նշված արտակարգ իրավիճակի առկայությունը հավաստվում է արտաքին քաղաքականության ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից:

6. Բարձրագույն կրթության առաջին և երկրորդ մակարդակների պետության կողմից տրամադրվող ուսումնառության կրթաթոշակ ստացող ուսանողն այն ստանում է տվյալ մակարդակում կրթության ամբողջ ժամանակահատվածի համար և բարձրագույն կրթության առաջին մակարդակի դեպքում զրկվում է չորս կիսամյակ (բարձրագույն կրթության երկրորդ մակարդակի դեպքում՝ երկու կիսամյակ) անընդմեջ տվյալ կրթական ծրագրի համար բուհի կողմից սահմանված միջին որակական գնահատականի 20 տոկոսով պակաս ունենալու դեպքում: Ուսումնառության կրթաթոշակից զրկվելու դեպքում ուսումնառության կրթաթոշակ տրամադրելու իրավասությունը վերապահվում է տվյալ բուհին:

7. Պետության կողմից տրամադրվող ուսումնառության կրթաթոշակի կարող են հավակնել միայն լրիվ բեռնվածությամբ սովորող ուսանողները: Ուսումնառությունը մասնակի բեռնվածությամբ շարունակելու դեպքում ուսանողը զրկվում է պետության կողմից ուսումնառության կրթաթոշակ ստանալու հնարավորությունից:

8. Պետության կողմից տրամադրվող ուսումնառության կրթաթոշակ ուսանողի տրվում է տարեկան լրիվ ուսումնական բեռնվածության 100 տոկոս գումարային կրեդիտներին համապատասխան:

9. Պետական բյուջեից ֆինանսավորում (ուսումնառության կրթաթոշակի ձևով՝ ուսումնառության վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ) չեն կարող ստանալ.

1) այն անձինք, որոնք կրկնաբար ուսումնառում են նույն կամ ցածր մակարդակի կրթական ծրագրով, եթե նրանք ձեռք են բերել այդ կրթական ծրագրի կրեդիտների կեսից ավելին պետական բյուջեի միջոցներով, բացառությամբ՝ Կառավարության կողմից սահմանված դեպքերի,

2) այն անձինք, որոնք միաժամանակ սովորում են երկու կամ ավելի կրթական ծրագրերով, որոնք շնորհում են նույն կրթական մակարդակի աստիճան կամ աստիճան չշնորհող կրթական ծրագրերով, եթե դրանցից առնվազն մեկով նրանց ուսումնառությունը ֆինանսավորվում է պետական բյուջեի միջոցներով (նրանք վճարում են երկրորդ կամ այլ կրթական ծրագրերի համար),

3) այն անձինք, որոնք կրկնաբար ուսումնասիրում են կրթական ծրագրի առանձին դասընթացներ (նրանք վճարում են դասընթացի (մոդուլի) ծավալին համաչափ ուսումնառության վարձ),

4) այն անձինք, որոնք սովորում են ոչ ֆորմալ կրթական ծրագրերով (նրանք վճարում են դասընթացի (մոդուլի) ծավալին համաչափ ուսումնառության վարձ),

5) այն անձինք, որոնք սովորում են Հայաստանի Հանրապետությունում գործող օտարերկրյա պետությունների բուհերի մասնաճյուղերում, բացառությամբ՝ միջազգային պայմանագրերով ստեղծված մասնաճյուղերի,

6) այն անձինք, որոնք հանդիսանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, սակայն բուհ են ընդունվել օտարերկրյա քաղաքացիների համար սահմանված կարգով,

7) Կառավարության կողմից սահմանված այլ դեպքերում:

10. Բուհը վճարովի ուսուցմամբ սովորող ուսանողական համակազմի առնվազն 10 տոկոսին, ուսանողների ուսումնառության վարձերից գոյացած բյուջեի առնվազն 5 տոկոսի չափով իրականացնում է ուսումնառության վարձի փոխհատուցում:

11. Պետական բյուջեից ֆինանսական աջակցություն կարող է ստանալ Կառավարության կողմից առաջատար ճանաչված օտարերկրյա բուհում Հայաստանի Հանրապետության համար առաջնահերթություն հանդիսացող կրթական ոլորտներում բարձրագույն կրթություն ստացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

12. Օտարերկրյա քաղաքացիները Հայաստանի Հանրապետությունում գործող բուհերում պետության կողմից ուսումնառության կրթաթոշակի ձևով ուսումնառության վարձի լրիվ փոխհատուցմամբ բարձրագույն կրթություն կարող են ստանալ միջպետական պայմանագրերով նախատեսված կրթաթոշակային տեղերի շրջանակներում կամ սույն օրենքի 17-րդ հոդվածի դրույթներին համապատասխան բուհ ընդունվելու դեպքում:

13. Պետության և բուհի կողմից տրվող ուսումնառության կրթաթոշակներին հավակնելու դեպքում ուսանողը կարող է օգտվել դրանցից միայն մեկից, որի դեպքում կիրառվում է լրիվ կամ մասնակի փոխհատուցման առավելագույն չափը:

14. Բուհն ուսանողներին կարող է տրամադրել ուսումնառության կրթաթոշակներ, ուսումնառության նպաստներ և ուսանողական ֆինանսական խրախուսում, ինչպես նաև կարող է սահմանել ուսումնառության վարձի վճարման պարբերականություն:

15. Բուհերն ուսանողների տվյալ տարվա ուսման վարձի փոխհատուցման և ուսանողական ֆինանսական խրախուսումների տրամադրման վերաբերյալ մինչև հաջորդ տարվա ապրիլի 1-ը ներկայացնում են հաշվետվություն լիազոր մարմին:

16. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ համապատասխան պայմանագիր կնքած քաղաքացիների ուսումնառությունը կազմակերպվում է պետության կողմից ուսումնառության կրթաթոշակների ձևով ուսումնառության վարձի լրիվ փոխհատուցմամբ:

ԳԼՈՒԽ 6

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

Հոդված 36. ~~35~~. Ուսանողները, ուսանողների ներկայացուցչական մարմինները և միավորումները

1. Ուսանողը կարող է իր հայեցողությամբ ընտրել կրթական ծրագիրը, զբաղվել հետազոտություններով, ցանկացած կրթական մակարդակում ընդհատել կամ շարունակել բարձրագույն կրթությունը:

2. Բուհի կանոնադրությամբ կամ ուսանողների նախաձեռնությամբ կարող է բուհում ստեղծել ուսանողական տարբեր կառույցներ և միավորումներ:

2. Ուսանողն իրավունք ունի՝

1) բուհի սահմանած կարգով ընտրելու տվյալ կրթական ծրագրով նախատեսված դասընթացներ (ուսումնական մոդուլներ),

2) բացի ընտրած կրթական ծրագրի ուսումնական մոդուլներից գրանցվելու ուսումնական ցանկացած այլ մոդուլի, որը դասավանդվում է տվյալ կամ ցանկացած այլ բուհում՝ այդ բուհի կանոնադրությամբ սահմանված կարգով,

3) համաձայն բուհի սահմանած ընթացակարգի՝ անվճար օգտվելու գրադարաններից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական և այլ ծառայություններից, մասնակցելու հետազոտական աշխատանքներին և գիտակրթական միջոցառումներին,

4) օգտվելու ուսումնառության կրթաթոշակ ստանալու իրավունքից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

5) ծանոթանալու բուհի կանոնադրությանը և այլ իրավական ակտերին,

6) լիազոր մարմնի ղեկավարի սահմանած կարգով ստանալու ակադեմիական արձակուրդ մինչև մեկ տարի ժամկետով,

7) տվյալ ուսումնական տարվա ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ, գտնվելու արձակուրդում,

8) տեղափոխվելու մեկ այլ բուհ ուսումնառելու կամ ուսումնառության առանձին փուլեր իրականացնելու (ներառյալ՝ օտարերկրյա պետությունների բուհերում),

9) ստանալու բարոյական կամ նյութական խրախուսանք՝ բուհի սահմանած կարգով,

10) բուհի սահմանած կարգով անցնելու ուսումնական, մասնագիտական և հետազոտական պրակտիկա համապատասխան հիմնարկներում և կազմակերպություններում, Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում,

11) լիազոր մարմնի ղեկավարի սահմանված կարգով շարունակելու ուսումնառությունը տվյալ կամ մեկ այլ բուհի կրթական ծրագրով, իր ուսումնառած կրթական ծրագրերից որևէ մեկի դադարեցման դեպքում,

12) օրենքով կամ բուհի կանոնադրությամբ նախատեսված կարգով լիիրավ մասնակցելու բուհի համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին,

13) մասնակցելու ուսանողների կողմից բուհի ակադեմիական կազմի աշխատանքի որակի և առաջարկվող դասընթացների գնահատման հարցումներին,

14) միավորվելու ուսանողական ինքնակառավարման մարմիններում:

3. Ուսանողը պարտավոր է՝

1) կատարել բուհի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված պարտականությունները,

2) ուսումնառության պայմանագրով նախատեսված ժամկետներում և կարգով վճարել ուսումնառության վարձը,

3) պահպանել բուհի կողմից սահմանված ակադեմիական բարեվարքության կանոնակարգի պահանջները:

4. Ուսանողն ունի սույն օրենքով և այլ օրենքներով, ինչպես նաև բուհի կանոնադրությամբ, բուհի և ուսանողի միջև կնքված պայմանագրով նախատեսված այլ իրավունքներ և պարտականություններ:

5. Բուհի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով նախատեսված պարտականությունների խախտման դեպքում ուսանողի նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական տույժեր՝ ընդհուպ բուհից հեռացնելը:

6. Ուսանողը չի կարող հեռացվել ակադեմիական արձակուրդի կամ հղիության և ծննդաբերության արձակուրդի ընթացքում:

7. Ուսանողն իրավունք ունի բուհի կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով բողոքարկելու բուհի ղեկավարության հրամաններն ու

կարգադրությունները: Ուսանողն իր իրավունքները կարող է պաշպանել նաև դատական կարգով:

8. Բարձրագույն կրթության համապատասխան մակարդակի ամփոփիչ ատեստավորումը հանձնած և բուհի ներքին իրավական ակտերով ու ուսումնառության պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարած ուսանողները սահմանված կարգով ազատվում են բուհից և դադարում են ունենալ ուսանողի կարգավիճակ:

9. Կրթությունը ընդհատած նախկին ուսանողը, անկախ ընդհատման պատճառից և ժամկետից, իրավունք ունի բուհի կողմից սահմանված կարգով վերականգնելու ուսանողի իր կարգավիճակը:

10. Բուհերում ուսանողական ինքնակառավարման մարմինները գործում են սույն օրենքի ու բուհի կանոնադրության, ինչպես նաև ուսանողական խորհրդի՝ բուհի ակադեմիական խորհրդի կողմից հաստատած կանոնադրության հիման վրա:

11. Բուհի ուսանողական խորհուրդը՝

1) բուհում և դրա համապատասխան կառուցվածքային միավորներում գործում է որպես ուսանողական ինքնակառավարման ընտրովի ներկայացուցչական մարմին, որը միավորում է բուհի ուսանողներին և իրականացնում նրանց ինքնակառավարման իրավունքը՝ ելնելով նրանց շահերից, կարիքներից, իրավունքներից և պարտականություններից,

2) իր գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում է կամավորության, կոլեգիալության և հրապարակայնության, ուսանողական ինքնակառավարման մարմնի ընտրության և հաշվետվողականության, ուսանողական մարմինների աշխատանքներում ուսանողների, կլինիկական ռեզիդենտների մասնակցության հավասարության, քաղաքական կուսակցությունների և կրոնական կազմակերպությունների (բացառությամբ հոգևոր բուհերի) ազդեցությունից անկախության սկզբունքներով,

3) սատարում և իրականացնում է գիտական և կրթական ոլորտներում ուսանողության նախաձեռնությունները,

4) կազմակերպում է ուսանողական գիտաժողովների, սեմինարների և գիտահետազոտական այլ ուղղվածություն ունեցող միջոցառումներ,

5) ապահովում է գիտական խմբերում և գիտական ծրագրերում ուսանողների ընդգրկվածությունը,

6) աջակցում է ուսանողների հետազոտական աշխատանքների հրապարակմանը,

7) ապահովում է ուսանողական ինքնավարության և ուսանողական ինքնակառավարման գործընթացները բուհի ողջ ուսանողության շրջանում,

արտահայտում և պաշտպանում է կրթություն ստացողների շահերը՝ նպաստելով նրանց հասարակական, մտավոր, մշակութային, բարոյական և հոգևոր զարգացմանը,

8) աջակցում է ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը,

9) կարող է դառնալ նաև համապատասխան միջազգային կազմակերպության անդամ կամ այդ կազմակերպությունների հետ զարգացնել համագործակցություն:

12. Ուսանողական խորհրդի ֆինանսավորման չափը սահմանում է բուհի կառավարման խորհուրդը, բայց ոչ պակաս, քան ուսանողների ուսումնառության վարձերից գոյացած բյուջեի առնվազն 0.2 տոկոսի չափով:

13. Բուհի ուսանողական մարմինները պարտավոր են առնվազն տարին մեկ անգամ բուհի համապատասխան կառավարման մարմիններում ներկայացնել հրապարակային հաշվետվություն իրենց գործունեության արդյունքների, միջոցների և ծախսերի նախահաշվի կատարման վերաբերյալ՝ այն տեղադրելով նաև բուհի կամ իրենց կայքում:

Հոդված 37. 36. Բուհի և գիտական կազմակերպության աշխատողները, նրանց իրավունքներն ու պարտականությունները

1. Բուհի (մասնաճյուղի) և գիտական կազմակերպության աշխատողների ընտրության, նշանակման, առաջխաղացման և վերանշանակման չափանիշներն ու պայմանները, իրավունքներն ու պարտականությունները ու դրանց առնչվող դրույթներն ամրագրվում են բուհի և գիտական կազմակերպության կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով և համապատասխան ներքին այլ իրավական ակտերով՝ սույն հոդվածի ընդհանուր դրույթներին համապատասխան, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի պահանջները:

2. Բուհում սահմանվում են՝ ակադեմիական (պրոֆեսոր, դոցենտ, ավագ դասախոս, դասախոս, ասիստենտ, իսկ ռազմաուսումնական հաստատությունում՝ ամբիոնի պետ, ցիկլի պետ, խմբի պետ, պրոֆեսոր, դոցենտ, ավագ դասախոս, դասախոս, ասիստենտ), իսկ բուհում և գիտական կազմակերպությունում՝ գիտական (գլխավոր գիտական աշխատող, առաջատար գիտական աշխատող, ավագ գիտական աշխատող, գիտական աշխատող, կրտսեր գիտական աշխատող) կազմ, վարչական, ինժեներատեխնիկական, ուսումնաօժանդակ, արտադրական և այլ կազմի աշխատողներ:

3. Բուհ և գիտական կազմակերպության առանձնահատկություններից ելնելով տվյալ կազմակերպությունը կարող է սահմանել այլ պաշտոններ:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ակադեմիական կազմի և գիտական աշխատողների պաշտոններին ներկայացվող հիմնական չափանիշները սահմանում է

կառավարությունը՝ հաշվի անելով տվյալ բուհի, կրթության մակարդակի և ոլորտի կրթական ծրագրերի առանձնահատկությունները:

5.—3. Բուհի կանոնադրությամբ ամրագրվում են նաև առանցքային վարչական պաշտոններ զբաղեցնող անձանց՝ ռեկտորի տեղակալների (պրոռեկտորների, ռազմաուսումնական հաստատության պետի տեղակալների,), կառուցվածքային միավորների ղեկավարների, ղեկավար վարչական աշխատակազմի և նմանատիպ այլ պաշտոնների իրավունքներն ու պարտականությունները:

6. Սույն օրենքի 5-րդ մասով սահմանված վարչական պաշտոններում չեն կարող ընտվել (նշանակվել) այն անձինք, որոնք ընդգրկված են կուսակցական և քաղաքական ղեկավար մարմիններում կամ պետական պաշտոններում:

7. 4. Վարչական պաշտոն զբաղեցնող կամ կառավարման գործառույթներ իրականացնող անձինք կարող են իրականացնել նաև ակադեմիական գործունեություն:

8. 5. Վարչական պաշտոն զբաղեցնող անձը չի կարող զբաղեցնել վարչական կամ կառավարման գործառույթներ իրականացնող այլ պաշտոն:

9. 6. Ֆակուլտետի ղեկանի (կառուցվածքային միավորի ղեկավար, ռազմաուսումնական հաստատության ֆակուլտետի պետ) և ղեկանի տեղակալի, ամբիոնի վարիչի գործունեությունը համարվում է վարչական աշխատանք:

10. 7. Ֆակուլտետի ղեկավարումն իրականացվում է ղեկանի կողմից, որը պետք է ունենա ֆակուլտետի ուղղվածությանը համապատասխան գիտական աստիճան: Նույն անձն իրավունք ունի այդ պաշտոնը զբաղեցնելու 5 տարի ժամկետով՝ ոչ ավելի, քան երկու անգամ անընդմեջ, այդ թվում ֆակուլտետի կառուցվածքային փոփոխության դեպքում:

11. 8. Ամբիոնի ղեկավարումն իրականացվում է ամբիոնի վարիչի կողմից, որը պետք է ունենա ամբիոնի ուղղվածությանը համապատասխան գիտական աստիճան: Նույն անձն իրավունք ունի այդ պաշտոնը զբաղեցնելու 5 տարի ժամկետով՝ ոչ ավելի, քան երկու անգամ անընդմեջ, այդ թվում ամբիոնի կառուցվածքային փոփոխության դեպքում:

12. 9. Բուհի՝ որոշակի ոլորտում գիտահետազոտական գործունեություն իրականացնող ինքնուրույն կառուցվածքային միավորի ղեկավարումն կարող է իրականացվել ոլորտի ուղղվածությանը համապատասխան գիտական աստիճան ունեցող անձի կողմից, որն իրավունք ունի այդ պաշտոնը զբաղեցնելու 5 տարի ժամկետով՝ ոչ ավելի, քան երկու անգամ անընդմեջ, այդ թվում՝ տվյալ կառուցվածքային միավորի կառուցվածքային փոփոխության դեպքում:

13. 10. Բուհի ընտրովի պաշտոններն են՝ ռեկտորի, ռազմաուսումնական հաստատության պետի տեղակալի, մասնաճյուղի——տնօրենի, ղեկանի,

գիտահետազոտական գործունեություն իրականացնող այլ կառուցվածքային միավորի ղեկավարի, ամբիոնի վարիչի (ռազմաուսումնական հաստատության ֆակուլտետի, ամբիոնի, ցիկլի, խմբի պետի), պրոֆեսորի, դոցենտի, ավագ դասախոսի, դասախոսի և ասիստենտի պաշտոնները:

14. 44. Բուհի մասնաճյուղի ղեկավարումն իրականացվում է մասնաճյուղի տնօրենի կողմից՝ բուհի կանոնադրությամբ սահմանված կարգով:

15. 42. Բուհում վարչական, ակադեմիական կազմի և գիտական կազմի աշխատողների բոլոր թափուր պաշտոններն զբաղեցվում են բուհի կանոնադրությանը և կանոնակարգերին համապատասխան:

16. 43. Բուհում ակադեմիական կազմի թափուր պաշտոնների տեղակալումն իրականացվում է բաց մրցութային կարգով՝ 3-5 տարի ժամկետով, իսկ ռազմաուսումնական հաստատության ակադեմիական կազմի թափուր պաշտոնների դեպքում՝ մինչև 3 տարի ժամկետով: Ակադեմիական կազմի գործունեության արդյունքների գնահատման հիման վրա աշխատանքային հարաբերությունները կարող են շարունակվել 3 տարի ժամկետով՝ առանց մրցութային ընտրության:

17. 44. 65 տարին լրացած անձը բուհում ակադեմիական կազմի թափուր պաշտոնների տեղակալման համար անցկացվող մրցութային ընտրությանը չի մասնակցում: Այդ անձի հետ բուհի ռեկտորը՝ ամբիոնի առաջարկությամբ, կարող է կնքել ոչ լրիվ ժանրաբեռնվածությամբ աշխատանքային պայմանագիր 1 ուսումնական տարի ժամկետով՝ տարեկան երկարաձգման իրավունքով:

18. 45. Բուհում (մասնաճյուղում) վարչական պաշտոնում նշանակված կամ ընտրության արդյունքում վարչական պաշտոնում նշանակված (ընտրված) անձի լիազորությունները դադարեցվում են ռեկտորի որոշմամբ, եթե լրացել է նրա 65 տարին:

19. 46. Բուհի և գիտական կազմակերպության աշխատողն իրավունք ունի՝

1) բուհի և գիտական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով ընտրելու և ընտրվելու բուհի համապատասխան պաշտոններում և կառավարման համապատասխան մարմիններում,

2) մասնակցել բուհի և գիտական կազմակերպության գործունեությանը վերաբերող հարցերի քննարկմանը և լուծմանը,

3) իր հայեցողությամբ կրթական ծրագրի շրջանակներում կազմել դասընթացի կամ ուսումնական մոդուլի բովանդակությունը, ընտրել դասավանդման և ուսումնառության մեթոդներ, գիտական հետազոտությունների թեմաներ և իրականացնել դրանք իր ընտրած մեթոդներով,

4) ընտրել իր հետաքրքրություններին և ստեղծագործական ունակություններին համապատասխան գիտահետազոտական գործունեության ձևեր, ուղղություններ և միջոցներ,

5) գիտահետազոտական համատեղ գործունեություն ծավալելու նպատակով միավորվել այլ գիտական աշխատողների հետ և կազմակերպել ժամանակավոր գիտական խմբեր,

6) հրաժարվել այն հիմնարար կամ կիրառական գիտական հետազոտություններին մասնակցելուց, որոնք կարող են բացասական ազդեցություն թողնել մարդու, հասարակության կամ շրջակա միջավայրի վրա,

7) մասնակցել պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ֆինանսավորվող հիմնարար կամ կիրառական հետազոտությունների համար հայտարարված մրցույթներին,

8) ազատորեն օգտագործել, տարածել և փոխանակել գիտական տեղեկատվություն, տպագրել և հրապարակել սեփական հետազոտությունների արդյունքները, եթե դրանք չեն պարունակում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պետական, ծառայողական, առևտրային և այլ գաղտնիք համարվող տեղեկատվություն,

9) գիտության զարգացման, տեխնոլոգիաների, գիտական արդյունքների, արտադրության մեջ դրանց ներդրման ու գիտական կադրերի պատրաստման համար արժանանալ մրցանակների, տիտղոսների, պատվավոր կոչումների,

10) իրականացնել գիտական և գիտատեխնիկական փորձաքննություն ու խորհրդատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

11) գիտական արդյունքները ներկայացնել գիտական զեկուցումների, հրապարակումների ու ատենախոսությունների պաշտպանության եղանակով, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ աշխատանքային պայմանագրով,

12) օգտվելու ակադեմիական ազատության սկզբունքներից բխող այլ իրավունքներից,

13) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենքով չարգելված այլ գործունեություն:

20. 47. Բուհի և գիտական կազմակերպության աշխատողը պարտավոր է՝

1) պահպանել բուհի և գիտական կազմակերպության կանոնադրությամբ ու ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները,

2) բուհի կողմից սահմանված կարգով և ժամկետներում անցնել մասնագիտական զարգացման դասընթացներ,

3) պահպանել բուհի կամ գիտական կազմակերպության կողմից սահմանված էթիկայի կանոնները և ակադեմիական բարեվարքության կանոնակարգի պահանջները,

4) գիտահետազոտական գործունեությամբ վնաս չհասցնել մարդու կյանքին, առողջությանը և շրջակա միջավայրին,

5) կատարել բուհի կամ գիտական կազմակերպության կանոնադրությամբ, այլ իրավական ակտերով և աշխատանքային պայմանագրով նախատեսված այլ պարտականություններ,

6) իրականացնել գիտական և գիտատեխնիկական փորձաքննություն և խորհրդատվություն:

21. ~~18.~~ **Գիտական կազմակերպության գիտական աշխատողները** կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով ենթակա է պարտադիր ատեստավորման՝ պաշտոնն առաջին անգամ զբաղեցնելու կամ ավելի բարձր պաշտոնի հավակնելու դեպքում: Ատեստավորումը նպատակ ունի պարզել գիտական աշխատողի մասնագիտական գիտելիքների համապատասխանությունը հավակնող պաշտոնին:

22. ~~19.~~ **Բուհը և գիտական կազմակերպությունն** ինքնուրույն է որոշում իր աշխատողի աշխատանքի վարձատրության ձևը և աշխատավարձի չափը, ինչպես նաև նյութական խրախուսման այլ միջոցների չափերը և տրամադրման կարգը:

23. ~~20.~~ **Բուհը կրթական և գիտահետազոտական գործունեությունն** ապահովելու նպատակով պետական բյուջեից հատկացվող և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացվող միջոցների հաշվին ինքնուրույն ձևավորում է աշխատողների աշխատանքի վարձատրության ֆոնդ:

Հոդված 38. Գիտական աշխատողի աշխատանքի վարձատրությունը և գիտահետազոտական գործունեության ստաժը, գիտական աստիճան ունեցող անձանց տրվող երաշխիքները

1. Պետությունը՝ հանրային բուհում և հանրային գիտական կազմակերպությունում գիտահետազոտական գործունեության առնվազն 30 տարվա ստաժ ու գիտական աստիճան ունեցող անձանց՝ 65 տարին լրանալու ու պետական գիտական և գիտատեխնիկական ծրագրերում ընդգրկված չլինելու դեպքում, տալիս է ամենամսյա դրամական վճար՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտահետազոտական ծրագրերում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտական աշխատողներին գիտական աստիճանի համար տրվող ամենամսյա հավելավճարների չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ամենամսյա դրամական վճար նշանակելու համար դիմելու, ամենամսյա դրամական վճար նշանակելու և վճարելու

կարգը սահմանում է Կառավարությունը, իսկ ամենամսյա դրամական վճար նշանակելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ ամենամսյա դրամական վճար նշանակելու լիազորություն ունեցող պետական մարմինը:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ամենամսյա դրամական վճարի տրամադրումը կատարվելու է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով գիտության բնագավառի գծով նախատեսվող ընդհանուր հատկացումների շրջանակներում:

ԳԼՈՒԽ 7

ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 39. Եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 40-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

2. Սույն օրենքի պահանջները բուհերի և գիտական կազմակերպությունների վրա տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո հաջորդ ուսումնական տարվանից սկսած:

3. Սույն օրենքի 9-րդ հոդվածի 16-18-րդ մասերով նախատեսված ուսումնառության գործընթացների կազմակերպումը բուհերում ներդնել 2022 թվականի սեպտեմբերի 1-ից: Մինչև սույն մասի ուժի մեջ մտնելը բուհ ընդունված ուսանողների ուսումնառության հետ կապված իրավահարաբերությունները շարունակվում են կարգավորվել «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-62-Ն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետի և «Կրթության մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297 օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ և 8-րդ մասի դրույթների հիման վրա ընդունված իրավական ակտերով:

4. Սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված ուսումնառության գործընթացի կազմակերպումը ներդնել 2022 թվականի սեպտեմբերի 1-ից: Մինչև սույն մասի ուժի մեջ մտնելն ուսումնառության գործընթացի (այդ թվում՝ գիտության թեկնածուի և գիտության դոկտորի գիտական աստիճանների հայցման համար սահմանված կարգով ու ժամկետներում հաստատված ատենախոսության թեմաների) և համապատասխան գիտական աստիճանների շնորհման հետ կապված իրավահարաբերությունները շարունակվում են կարգավորվել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» 2000 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-119 օրենքի 16-րդ հոդվածի դրույթների հիման վրա ընդունված իրավական ակտերով:

5. Սույն օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասն ուժի մեջ է մտնում 2022 թվականի սեպտեմբերի 1-ից:

6. Սույն օրենքի 18-րդ հոդվածի 5-8-րդ մասերն ուժի մեջ են մտնում 2022 թվականի սեպտեմբերի 1-ից, իսկ 4-րդ մասը՝ 2024 թվականի սեպտեմբերի 1-ից: Մինչև սույն մասի ուժի մեջ մտնելը բուհ ընդունելության հետ կապված իրավահարաբերությունները շարունակվում են կարգավորվել «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-62-Ն օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի և 21-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի և «Կրթության մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297 օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթների հիման վրա ընդունված իրավական ակտերով:

7. Սույն օրենքի 33-րդ օրենքի հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը և 3-րդ մասի 1-ին կետը՝ հանրային բուհերի մասով, ինչպես նաև 35-րդ օրենքի հոդվածի 6-8-րդ մասերն ուժի մեջ են մտնում 2022 թվականի սեպտեմբերի 1-ից, իսկ սույն օրենքի 33-րդ օրենքի հոդվածի 4-րդ մասի դրույթը՝ բուհերի առաջին և երկրորդ մակարդակների (այդ թվում՝ ինտեգրված ծրագրի) կրթական ծրագրերի դեպքում ուժի մեջ է մտնում 2024 թվականի սեպտեմբերի 1-ից, առաջին և երկրորդ մակարդակների (այդ թվում՝ ինտեգրված ծրագրի) բժշկական և մանկավարժական ուղղվածությամբ կրթական ծրագրերի դեպքում՝ 2022 թվականի սեպտեմբերի 1-ից, իսկ երրորդ մակարդակի կրթական ծրագրերի դեպքում՝ 2027 թվականի սեպտեմբերի 1-ից:

8. Սույն օրենքի 38-րդ օրենքի հոդվածի 1-ին մասն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

9. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-62-Ն օրենքը, բացառությամբ նույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ և 4.1-4.3 մասերի, 8-րդ հոդվածի 2-րդ մասի 21) կետի, 14-րդ հոդվածի, 21-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի և 2-րդ մասի 10-րդ կետի դրույթների, որոնք շարունակվում են գործել մինչև սույն հոդվածի 3-րդ և 6-րդ մասերով նախատեսված դրույթների ուժի մեջ մտնելը:

10. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» 2000 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-119 օրենքը, բացառությամբ գիտությունների թեկնածուի և գիտության դոկտորի գիտական աստիճանների շնորհման մասով նույն օրենքի 16-րդ հոդվածի դրույթների, որոնք շարունակվում են գործել մինչև սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դրույթի ուժի մեջ մտնելը:

11. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» 2000 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-119 օրենքով սահմանված դեպքերում ու կարգով շնորհված գիտության դոկտորի գիտական աստիճանը, ինչպես

նաև պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումները պահպանում են իրենց իրավաբանական ուժը:

12. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» 2011 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-135-Ն օրենքը:

Հոդված 39. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ, 10-րդ հոդվածի 8-րդ և 13-րդ, 12-րդ հոդվածի 6-րդ, 14-րդ հոդվածի 5-րդ և 17-րդ հոդվածի 8-րդ մասերից բխող Կառավարության որոշումները ընդունվում են մինչև 2022 թվականի սեպտեմբերի 1-ը:

~~2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը բուհին տրված լիցենզիաները գործում են մինչև 2021 թվականի նոյեմբերի 30-ը ներառյալ և դրանց գործողությունը դադարում է 2021 թվականի դեկտեմբերի 1-ից: Սույն օրենքի 14-րդ հոդվածի դրույթներին համապատասխան նոր լիցենզիաներ ստանալու կամ լիցենզիաները վերածնակերպելու համար բուհը պետք է դիմի մինչև 2021 թվականի սեպտեմբերի 1-ը:~~

2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը լիցենզավորված բուհերը մինչև 2022 թվականի հունիսի 30-ը ներառյալ համապատասխան լիազոր մարմին են ներկայացնում սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերի ամբողջական փաթեթը՝ համաձայն լիազոր մարմնի սահմանած ձևաչափի: Սահմանված ժամկետում փաստաթղթերը չհամալրելու դեպքում մինչև հուլիսի 15-ը, օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով տվյալ բուհի գործունեությունը դադարեցվում է:

3. Մինչև Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978-Ն որոշման ընդունումը շնորհված հավատարմագրման վկայականները վավեր են մինչև 2021 թվականի օգոստոսի 1-ը:

4. Մինչև 2024 թվականի օգոստոսի 31-ը ինստիտուցիոնալ հավատարմագրում ունեցող, սակայն տվյալ կրթական ծրագրով (բժշկական և մանկավարժական ուղղվածությամբ կրթական ծրագրերի դեպքում՝ մինչև 2022 թվականի օգոստոսի 31-ը) ծրագրային հավատարմագրում չունեցող բուհերի կողմից տրամադրված դիպլոմները և շնորհված որակավորումները ճանաչվում են պետության կողմից:

5. Սույն օրենքի 16-րդ հոդվածի դրույթներին համապատասխան բուհերի առաջին և երկրորդ մակարդակների (այդ թվում՝ ինտեգրված ծրագրի) կրթական ծրագրերն ենթակա են ծրագրային հավատարմագրման մինչև 2024 թվականի սեպտեմբերի 1-ը, բացառությամբ բժշկական և մանկավարժական ուղղվածությամբ կրթական ծրագրերի, որոնք ենթակա են պարտադիր ծրագրային հավատարմագրման մինչև 2022 թվականի

սեպտեմբերի 1-ը, իսկ երրորդ մակարդակի կրթական ծրագրերը՝ մինչև 2027 թվականի սեպտեմբերի 1-ը:

6. Ներառյալ 2027 թվականի դեկտեմբերի 30-ը շնորհված գիտության թեկնածուի գիտական աստիճանը պահպանում է իր իրավաբանական ուժը և հավասարեցվում է սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին համապատասխան շնորհված դոկտորի գիտական աստիճանին:

7. Սույն օրենքի 36-րդ հոդվածի 15-րդ մասը չի տարածվում այն անձանց վրա, որոնք ընտրվել (նշանակվել) են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը: Նրանք պաշտոնավարում են մինչև պայմանագրի ժամկետի լրանալը:

8. Սույն օրենքի 26-31-րդ հոդվածների, **36-րդ հոդվածի 9-ից 15-րդ մասերի** դրույթները, **կարող են չկիրառվել** պետության մասնակցությամբ բուհերի վրա: Այդ բուհերի նկատմամբ կիրառվում են տվյալ բուհի կանոնադրությամբ սահմանված նորմերը: Նշված բուհերում օտար լեզուներով ուսուցման կազմակերպումն **դասընթացը կազմակերպվում է բուհին տված լիցենզիայի հիման վրա:**

9. Սույն օրենքի 24-րդ հոդվածի, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ և 9-րդ մասերի, դրույթները չեն տարածվում պետական մասնակցությամբ և մասնավոր գիտական կազմակերպությունների վրա: Պետական մասնակցությամբ գիտական կազմակերպությունների նկատմամբ կիրառվում են տվյալ գիտական կազմակերպության կանոնադրությամբ, իսկ մասնավոր գիտական կազմակերպությունների նկատմամբ՝ տվյալ կազմակերպական-իրավական ձևի իրավաբանական անձի գործունեությունը կարգավորող օրենքով և տվյալ գիտական կազմակերպության կանոնադրությամբ սահմանված նորմերը:

10. Սույն օրենքի 26-29-րդ հոդվածների, ինչպես նաև 31-րդ հոդվածի, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ մասի, դրույթները չեն տարածվում մասնավոր բուհերի վրա: Մասնավոր բուհի նկատմամբ կիրառվում են տվյալ կազմակերպական-իրավական ձևի իրավաբանական անձի գործունեությունը կարգավորող օրենքով և մասնավոր բուհի կանոնադրությամբ սահմանված նորմերը:

11. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա պետությունների ռազմաբժշկական բուհերում կամ ստորաբաժանումներում, ինչպես նաև պաշտպանության պետական կառավարման լիազորված մարմնի պատվերով բարձրագույն բժշկական կրթության ինտեգրված կամ համարժեք ծրագրով ուսուցում անցնող անձանց հետ կնքված պայմանագրերի համաձայն հետուսումնական ինտերնատուրայի կրթական ծրագրով ուսումնառությունն սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ենթակա է իրականացման սույն օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ, 9-րդ և 10-րդ մասերով սահմանված կարգով:

12. Սույն օրենքի 26-րդ հոդվածի դրույթներին համապատասխան հանրային բուհերի և սույն օրենքի 24-րդ հոդվածի դրույթներին համապատասխան հանրային գիտական կազմակերպությունների կառավարման խորհուրդները ձևավորվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում: Մինչ սույն օրենքով նախատեսված կարգով նոր կառավարման խորհուրդների ձևավորումը, հանրային բուհերի գործող կառավարման խորհուրդները շարունակում են իրենց լիազորությունների իրականացումը:

~~13. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո մինչև սույն հոդվածի 12-րդ մասին համապատասխան հանրային բուհերում և հանրային գիտական կազմակերպություններում կառավարման խորհուրդների ձևավորումը՝ այդ բուհերում և գիտական կազմակերպություններում համապատասխան ոլորտի լիազոր մարմնի ղեկավարը հինգ տարուց ոչ ավելի ժամկետով նշանակում է ռեկտոր, տնօրեն: Սույն մասով նախատեսված կարգով նշանակվող ռեկտորի, տնօրենի նկատմամբ սույն օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի և 24-րդ հոդվածի 9-րդ մասի, ինչպես նաև 24-րդ հոդվածի 11-րդ և 13-րդ մասերի, 29-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 7-րդ կետերի, 31-րդ հոդվածի 12-րդ մասի պահանջները չեն կիրառվում:ջ~~

13.—14. Սույն օրենքի 36-րդ հոդվածի 14-րդ մասով նախատեսված կարգավորումները չեն տարածվում այն անձանց վրա, որոնք ընտրվել (նշանակվել) են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը: Նրանք պաշտոնավարում են մինչև պայմանագրի ժամկետի լրանալը, և սույն օրենքի 36-րդ հոդվածի 14-րդ մասով նախատեսված դրույթները մինչև 2025 թվականի հունվարի 1-ը կիրառվում են միայն 70 տարին լրացած անձանց նկատմամբ:

14.—15. Սույն օրենքի 36-րդ հոդվածի 15-րդ մասով նախատեսված դրույթը կիրառվում է 2025 թվականի հունվարի 1-ից: Մինչ այդ սույն օրենքի 36-րդ հոդվածի 15-րդ մասով նախատեսված դրույթը կիրառվում է այն անձանց նկատմամբ, ում 70 տարին լրացել է: